

Երեսնամյա այսպես

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

5 մայիսի

**ԱՄՆ Սան Խոսեի ղեկավար համալսարանի
դասվիրականությունը**



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Սան Խոսեի պետական համալսարանի պատվիրակությանը՝ գլխավորությամբ համալսարանի ռեկտոր Մարի Փափազյանի եւ ուղեկցությամբ երեւանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պ. գ. դ. պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի։

Հանդիպմանը տիար Ռուբեն Միրզախանյանը Նորին Սրբությանը ներկայացրեց երկու կրթական հաստատությունների միջեւ սկզբնավորվող համագործակցությունը, որը Նոր հնարավորություններ պիտի ընձեռնի ուսանողներին։

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բերելով երկու համալսարանների նախաձեռնությանը, հույս հայտնեց, որ այն արդյունավետ կլինի եւ կնպաստի երիտասարդ սերունդ-

ների կրթությանը եւ փաստեց, որ հայ ընտանիքներում ուսմանն ու կրթությանը մշտապես մեծ ուշադրություն է դարձվել, ինչը կարելի է դերակատարություն է ունեցել հայ ժողովրդի կյանքում։

Իր հերթին Սան Խոսեի համալսարանի ռեկտոր տիկին Մարի Փափազյանը եւս կարելի է համարեց երկու համալսարանների միջեւ հարաբերությունների խորացումն ու զարգացումը։

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրերին տեղեկացրեց նաեւ Մայր Աթոռի հովանու ներքո գործող հանրակրթական դպրոցների գործունեության, ինչպես նաեւ հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատություններում ապագա եկեղեցականների պատրաստության մասին։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը։

7 մայիսի

«Բյուլուլյան» հիմնադրամի անդամներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Բյուլուլյան» հիմնադրամի անդամներին (Ֆրանսիա)՝ գլխավորությամբ հիմնադրամի նախագահ Ժան-Պիեր Զլավդանի։

Ամենայն Հայոց Հայրապետը, կարելի էր երկու հիմնադրամի անդամների ճանաչողական այցը Հայաստան եւ Սբ Էջմիածին, անդրադարձավ հիմնադրամի գործունեությանը եւ մասնավորապես առողջապահության ոլորտում Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ցուցաբերվող գորակցությանը։

Վեհափառ Հայրապետը հիմնադրամի կառավարիչներին ու բարեկամներին ներկայացրեց Մայր Աթոռի ներկայիս առաքելությունը՝ առանձնացնելով Հայ եկեղեցու ծրագրերը սոցիալական ու կրթական ոլորտներում։ Նորին

Սրբությունը նաեւ անդրադարձ կատարեց քրիստոնեական դաստիարակության եւ հոգեւորականների պատրաստության խնդիրներին։

Իսկ հիմնադրամի նախագահը կարելի էր հանդիպումը եւ ներկայացրեց այցից ստացած տպավորությունները։ Պրն Ժան-Պիեր Զլավդանը նշեց, որ քաջատեղյակ եւ, թե որքան շանք է ներդրվում եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման համար։ Հիմնադրամի նախագահը հավելեց, որ այս այցը պիտի նպաստի հիմնադրամի կողմից իրագործվելիք ծրագրերի առավել արդյունավետ իրականացմանը։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի փոխղեկավար Դարթեմ վրդ. Բարսեղյանը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագիրը ՀՀ Նորընտիր վարչապետին

Մայիսի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորագիր է հղել տիար Նիկոլ Փաշինյանին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում ընտրվելու առիթով։

Վեհափառ Հայրապետի շնորհավորական նամակում մասնավորապես ասված է.

«ՀՀ Ազգային ժողովի կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետ ընտրվելու կապակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հղում ենք Ձեզ Մեր շնորհավորանքներն ու օրհնությունը։

Պատասխանատու այս պաշտոնին Դուք կոչվում եք երկրում ստեղծված ներքաղաքական բարդ իրավիճակի պայմաններում՝ հան-

րային լայն շրջանակների աջակցությամբ, քաղաքական ընդարձակ խորհրդակցությունների արդյունքում։

Լիառույս ենք, որ նախանձախնդիր ու հետեւողական ջանքերով պիտի նպաստեք մեր երկրում կայունության հաստատմանը եւ մեր ժողովրդի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը՝ հանուն մեր հայրենիքի գորացման ու առաջընթացի»։

Հաջողություններ մաղթելով Նորընտիր վարչապետին՝ հայրենաշեն ու ազգագուտ իր ծրագրերի ու նախաձեռնությունների իրագործման ճանապարհին՝ Նորին Սրբությունը հայցել է Բարձրյալին՝ խաղաղության ու բարօրության մեջ պահել Հայոց երկիրն ու հավատավոր ժողովրդին։

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ, ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՐՃԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՕՐԵՐԻ ԱՌԹՈՎ



Հաղթանակի եւ խաղաղության տոնի, Շուշիի ազատագրման եւ Արցախի Պաշտպանության բանակի օրերի առիթով հայրապետական Մեր օրնությունն ու շնորհավորանքն ենք հղում համայն մեր ժողովրդին՝ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս։

Նվիրական է այս օրը մեր ժողովրդի համար, որ հերոսաբար իր ավանդն է բերել Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի կերտմանը՝ հանուն աշխարհում խաղաղության եւ ժողովուրդների ազատ ու առաջադեմ կյանքի։ Հայրենամեկը մույն ոգով մեր ժողովուրդն ազատագրեց Շուշին՝ հաղթական մեր էջ հավելելով ազգային մեր պատմության մեջ։ Այսօր մենք համոզվածությամբ կարող ենք նաեւ Պաշտպանության բանակի օրը, որն անցկում ու քաջաբար պահպանում է Արցախի անվտանգությունն ու խաղաղությունը։

Գոհություն Տիրոջը, որ մեր ժողովրդի զավակները լի են վճռականությամբ ու նախանձախնդրությամբ հայրենիքի սահմանները պաշտպանելու եւ նորանոր իրագործումներով կերտելու լուսավոր ու պայծառ գալիքն ազգի եւ հայրենյաց։

Սուրբ Էջմիածնի կամարների ներքո Մեր աղոթքն ենք վերառաքում առ Բարձրյալ Տերը, որ խաղաղ լինի հայոց երկինքը եւ անվտանգ ու անխռով ապրի մեր ողջ ժողովուրդը։ Թող Տերը ամուր պահի հայրենի մեր պետականությունը, օրհնի եւ գորակից լինի մեր ժողովրդին այսօր եւ հավիտյանս. ամեն։

Օրհնությամբ՝
**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը «Հաղթանակ» զբոսայգու հուշահամալիր

Մայիսի 9-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հաղթանակի ու խաղաղության տոնի եւ Շուշիի ազատագրման օրվա առիթով, ուղեկցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների, այցելեց «Հաղթանակ» զբոսայգու հուշահամալիր։

Անհայտ զինվորի հուշարձանին ծաղկեպսակներ գետնեղեցուց հետո Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը, Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը եւ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, պետական այրերը, ՀՀ-ում հավատարմագրված

ղեկավարական ներկայացուցչությունների ղեկավարներ ու հասարակական գործիչներ հարգանքի տուրք մատուցեցին Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան հերոսամարտում զոհվածների անմահ հիշատակին։

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն առ Աստված աղոթեց նրանց հոգիների հանգստության համար։

Վերջում Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ու հայրապետական բարեմաղթանքները բերեց նաեւ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին։

Համբարձման տոնը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Մայիսի 10-ին Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին մեծ շուքով տոնախմբեց մեր Տեր Հիսուս Զրիստոսի Համբարձման տոնը, որը, տնօրինությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հոգակվել է որպես Սբ Էջմիածնի ուխտի օր:

Տերունի տոնին, երբ հիշատակվում է Նաեւ 1441 թվականին Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի՝ Սսից Էջմիածին փոխադրելու պատմական իրադարձությունը, Հայոց Հոգևորականության շուրջն էին համախմբվել հայաստանյան թեմերի առաջնորդները, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսները, միաբանները, թեմերում սպասավորող քահանաներն ու բազմաթիվ ուխտավորներ:

Միաձուլվելով Մայր տաճարում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագից եր Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Իր քարոզում հայր Գարեգինն անդրադարձավ Համբարձման տոնի խորհրդին. «...Համ-

բարձման խորհուրդն այսօր առաքելագործության պատգամ է, որ ամենքիս ուղղում է Զրիստոս: Զրիստոսի համբարձումը Նաեւ Իր երկրավոր առաքելության ամբողջացումն ու կատարելությունն է: Զրիստոս, երկինք մտնելով, ամենքիս ցույց տվեց, որ մենք եւս այնտեղ պետք է գնանք: Եթե համբարձման պատմությունը չլինեք, մենք երբեք չէինք իմանա, թե ս. հարությունից հետո Զրիստոսի հետ ի՞նչ տեղի ունեցավ, ինչպե՞ս վերամիավորվեց Հայր Աստծո հետ, եւ այդ կատարյալ վերամիավորության պատկերը մեզ համար ի՞նչ է, եթե ոչ կատարյալ հույս՝ մեր իսկ Աստծո հետ միավորության»:

Պատարագիցը խոսեց Նաեւ ազգային-եկեղեցական կյանքում առաքելագործության կարեւորության մասին:

«...Առաքելագործության տեսիլքով է, որ Զրիստոսի երկու առաքյալները՝ ս. Թադեոսն ու ս. Բարդուղիմեոսը, եկան Հայաստան եւ Զրիստոսի՝ «Գնացե՛ք, աշակերտեցե՛ք, մկրտեցե՛ք» ավետիսն ու պատգամը բերեցին Նաեւ Հայոց աշխարհ: Այդ նույն տեսիլքով է, որ այստեղ 301 թվականին ս. Գրիգոր Լուսա-

վորիչը հիմնեց այս Աթոռը՝ առաջին գահակալը դառնալով Սուրբ Էջմիածնի՝ Արարատյան Նախամեծար Աթոռի:

Դարեր շարունակ այս Աթոռը դեգերեց, դարեր շարունակ շրջեց, գնաց ուր որ թագավորն էր, ուր որ ժողովուրդն էր, եւ վերջիվերջո՝ 15-րդ դարում՝ սրանից 577 տարի առաջ, վերահաստատվեց Սուրբ Էջմիածնում:

Ինչպես Թովմա Մեծփեցի պատմիչն է ասում, այն պահին, երբ Արեւելյան վարդապետներն ու հավատացյալները հավաքվել էին այստեղ՝ այս սուրբ տաճարում, սավառակաբար մի արծիվ գալիս եւ բազմում է տաճարի սուրբ խաչին, եւ դա Նշան էր, որ վարդապետները գնան եւ առաքելագործեն, որովհետեւ, ինչպես այդ պահին Թովմա Մեծփե-

թոռ Սբ Էջմիածնում: Եվ այդ դարից ի վեր, այդ պահից ի վեր հայոց վարդապետները, եպիսկոպոսաց դասը, ամբողջ ժողովուրդը ձեռնամուխ եղան այս տաճարի վերաշինությանը:

Եվ մինչեւ այսօր հայ ազգը հոգեւորապես սնվում է հենց այս Նախամեծար Արարատյան Ս. Էջմիածնի Աթոռից՝ ստանալով իր մխիթարությունը, իր հոգեւոր զարթոնքի սնունդը: Այս Աթոռը դարձավ Ներման, արդարացման եւ հաշտության Աթոռ»,- ասաց հայր Գարեգինը՝ հավելելով, որ այսօր այն եւս իր գահակալով շարունակում է առաջնորդել՝ մարդկանց կյանքի մեջ բերելով Ներում, արդարացում եւ կատարյալ հաշտություն Աստծո հետ:

Պատարագի ավարտին, Նախագահու-



ցին է տորից վկայում, բացում են Ավետարանը եւ ընթերցում այն հատվածը, որտեղ Զրիստոս ասում է. «Այս աշխարհում Նեղություններ կտեսնեք, բայց քաջալերվեցե՛ք. ես հաղթեցի աշխարհին»:

Այս պատգամով է, որ Առաքելական այս Աթոռը 1441 թվականին՝ հենց այս օրը՝ Համբարձման տոնին, վերահաստատվեց Մայր Ա-

թամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք:

Արարողության ընթացքում հոգեւոր դասը եւ Ներկա հավատավոր ժողովուրդն առ Աստված աղոթք բարձրացրեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության, պայծառության ու շենացման համար:

Մայր Աթոռի միաբանները մասնակցեցին «Մխիթարը եւ մխիթարյանները» միջազգային գիտաժողովին

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ հրավերով Մխիթարյան միաբանությունում պապական Նվիրակ Լեւոն արք. Չեքիյանի՝ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը եւ եկեղեցական-ժողովական գրասենյակի տնօրեն Չաքարիա ծ. վրդ. Բաղդուկյանը մայիսի 3-ին մեկնեցին Վենետիկ՝ մասնակցելու մայիսի 4-6-ը Սուրբ Ղազար կղզում տեղի ունենալից «Մխիթարը եւ մխիթարյանները. քրիստոնեական լուսավորության դպրանոցը» միջազգային գիտաժողովին:

Հայր Շահեն Ներկայացրեց «Եվրոպական կաթոլիկ աստվածաբանական ավանդության Մխիթարյան հայրերի հայերեն թարգմանություններն իբրեւ մշակութային ֆենոմեն» թեմայով զեկույց, իսկ հայր Չաքարիան՝ «Հ. Միքայել վրդ. Չամչյանն Անապակ բաժակի՝ Հայոց Եկեղեցու սրբազան ավանդության ջատագով» զեկույցը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վավերացրեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդի ընտրությունը



Մայիսի 8-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունն ու շնորհավորանքն է հղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Դանիել վարդապետ Ֆընտրեյանին՝ մայիսի 4-ին գումարված ԱՄՆ հայոց արեւելյան թեմի թեմական պատգամավորա-

կան ժողովի ընթացքում թեմակալ առաջնորդ ընտրվելու կապակցությամբ:

Հաստատելով Դանիել վարդապետի ընտրությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նրան մաղթել է արդյունավոր ծառայություն՝ ի խնդիր ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ազգային ու հոգեւոր կյանքի առավել զորացման:

Հանրապետական մաղթանք՝ Երկրապահի օրվա առիթով

Մայիսի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Երկրապահի օրվա առիթով, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք:

Ներկաներն աղոթք բարձրացրեցին Հայաստան աշխարհի խաղաղության, անսասանության եւ բարօր կյանքի համար:

Արարողությանը Ներկա էին Երկրապահ կամավորականների միության Նախագահ, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Սանվել Գրիգորյանը, ՀՀ Ազգային ժողովի Նախագահ Արա Բաբլոյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, ԵԿԿ վարչության անդամներ, մարզային խորհուրդների ու տարածքային բաժանմունքների Ներկայացուցիչներ եւ պատանի երկրապահներ:

Մինչ Հանրապետական մաղթանքը, ՀՀ ՉՈւ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը, Ներկաներին շնորհավորելով Երկրապահի օրվա առիթով, ի մասնավորի նշեց. «Տարիներ առաջ էր, երբ Երկրապահ կամավորական միության դիմումին ընդառաջ՝ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ սկիզբ դրվեց



Երկրապահի օրվա առիթով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կամարների Ներքո ընդհանրական աղոթք մատուցելու գեղեցիկ ավանդույթին: Այսօր եւս համախմբվել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ մեր հարգանքը եւ խոնարհումը մատուցելու հայրենյաց պաշտպանության Նվիրական գործին լծված երկրապահներին, աղոթելու զոհված ազատամարտիկների հոգիների հանգստության եւ խաղաղության, ինչպես Նաեւ պատերազմի արհավիրքը վերապրածների քաջամոլության եւ կենաց արելշատության համար»:

Հանրապետական մաղթանքի արարողությունը Նախագահեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունը բաշխելով Ներկաներին, փառք բարձրացրեց առ Աստված, որ շնորհիվ հայոց քաջարի զավակների՝ այսօր հայրենիքն ապրում է խաղաղության մեջ:

Վեհափառ Հայրապետը Նկատեց, որ խաղաղության այս պայմաններում յուրաքանչյուրի սրբազան ու Նվիրական պարտքն է ջանքեր գործադրել երկրի շենացման, հայրենի կյանքի առաջընթացի եւ ժողովրդի բարօրության համար:

Նորին Սրբությունը մաղթեց, որ երկնավոր Տերը գորացնի ամենքին՝ ազգին մատուցվող իրենց ծառայության մեջ:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՉԳԱՊԱՀՊԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նվիրվում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 110-ամյակին

Սկիզբը՝ թիվ 1-6

1963-ին պաշտոնական այցով եւ միասնական ուխտով Մայր Աթոռ են ժամանում Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Շնորհք արք. Գալուստյանը եւ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Եղիշե արք. Տերտերյանը: Երեւոյթն աննախադէպ էր: Առաջին անգամ էին Հայաստանում լինում երկու Նվիրապետական պառնների գահակալները:

Շուրջ 30 հովվապետական ուղեւորություններ աշխարհի տարբեր հայաշատ անկյուններում ամրացրեցին հայության սերն ու հավատը Ս. Էջմիածնի հանդէպ: Միասնականության, միատեղության գաղափարը կարմիր թելի պէս ձգվում է Վեհափառի ողջ գործունեության ընթացքում: Վեհափառի հայրենասեր ու սպասված կերպարի շուրջ համախմբվելով եւ նրա խոսքին հավատալով՝ վստահելով միավորվում ու հավաքվում էին արտասահմանյան բարերարներ, մեծ չափի Նվիրատվություններ փոխանցում Ս. Էջմիածնի եկեղեցաշէն գործին: Նրա ջանքերով 1957 թ. Մայր Աթոռին վերադարձվեցին Ալ. Մանթաշյանի կառուցած Վեհարանը, վանքապատկան այլ շինություններ, շինարարական աշխատանքներ սկսվեցին Մայրավանքում եւ դրան հարակից շրջանում, Բաֆֆու «Խենթի» գերեզմանոցի վրա հառնեց Նոր Շիրմաքար, Սփյուռքի բարերարների օժանդակությամբ գնվեցին Արփա-Սեւան գետնուղու հորատման համար հզոր մեքենաներ, հայրենիք վերադարձան մագաղաթա բացառիկ մատյաններ, ձեռագրեր, տպագիր գրքեր:

Վազգեն Առաջինը համոզված հնչեցնում էր, որ «Չկայ իրական յառաջադիմութիւն առանց դարերու տքնութեամբ Նուիրագործուած արժեքներու: Ներկան ոգեկանութեան աւիշ կը ստանայ անցեալէն եւ ոգեկան Նոր թռիչք՝ ապագայի տեսիլքներէն» (Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Աստվածահրաւեր պատգամներ, Լոս Անճելէս, 2004, էջ 44):

Մայր Աթոռն աստիճանաբար ձեռք էր բերում իր երբեմնի փառքը:

Վազգեն Առաջինի համար եւս հեշտ չի եղել խորհրդային շրջանում ուծացման մեծ վտանգին հակահարված տալ՝ անթեք եւ անխառն պահելով Եկեղեցու պատմական

նորեն հաստատված եւ ժամանակի քննությունը բռնած ավանդույթները:

1986 թ. Կաթողիկոսը Նամակ է ստանում Ռուսաց Պատրիարք Ալեքսիից, որով Նա սիրալիր մի գրությամբ հրավիրում է մեր Եկեղեցուն միանալ, ձուլվել Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ: «Ինձ համար տառապալից օրեր եղան պատասխան խմբագրելու համար,- գրում է Վեհափառը,- մի պատասխան, որը լինէր Նույնպէս եղբայրական եւ սիրալիր, բայց Նաեւ մերժողական առաջադրանքը»: Այսուհանդերձ, Մոսկվա է ուղարկվում Վեհափառի բացասական պատասխանը (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվ, գործ 458):

Իր ժողովրդի անխառն հավատն ու հույսը վստահված էր Վազգեն Վեհափառին՝ համոզվածությամբ, որ ճակատագրական պահերին անխտոր ու անթեք կպահի ազգի միասնականության խորհրդանիշը՝ Եկեղեցին՝ դարձնելով այն ազգային իդեալների հավատացող, ապրեցնող ուժ:

Հայ ժողովրդի կյանքում աստեղային թռիչքի պատմական պահը, անշուշտ, սկսվեց 1991-ին, երբ պետականություն ունեւալու երազանքն այլեւս իրականություն էր, եւ որպէս ոսկետառ հավաստում՝ մեր դարավոր պատմության մատյանում գրվեց անկախության հռչակագիրը:

Վեհափառն անձամբ կատարեց Հայաստանի Երրորդ Հանրապետության անկախության ամենակարեւոր խորհրդանիշի՝ երկրի Նախագահի օժման եւ օրհնության արարողությունը: Ամենայն Հայոց Հայրապետը կրկին խոսեց ինքնագոհաբերության մասին, հիշեցրեց, որ երկրի Նախագահի տված երդումը պետք է լինի ինքնագոհաբերումի վճռական գիտակցությամբ արված խոստովանություն իր ժողովրդին:

Նախորդ հայրապետների նման Նա եւս սատարեց Նորանկախ Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը, խնդրեց ժողովրդին համախմբվել նրա շուրջ, դառնալ մեկ ազգ, մեկ մշակույթ: Սակայն տնտեսական, սոցիալական ճգնաժամը, շրջափակումն ու խստաշունչ ձմեռը եւս մեկ անգամ փորձության էին ենթարկում հայ ժողովրդի կամքն ու ոգին: Վեհափառը մերժում էր «խոսքի վաճառականներին», նման իրավիճակում միմիայն գործել էր պետք: Ցուրտը, խիստ ձմեռը լավատեսու-

թյունից զրկել էին ժողովրդին: Այդ օրերին Վեհարանի պայմանների մասին լրագրողի հարցին ի պատասխան՝ Հայոց Հայրապետը ցավով նկատում է. «Ինչպէս տաքանամ, երբ ժողովուրդս մրսում է» (Հայաստանի գրուցակից, թ.19/42/, մայիսի 16, Եր., 2008, Հայկուշ Լալայան, «Ինչպէս տաքանամ, երբ ժողովուրդս մրսում է»):


Բազմաթիվ Նախաձեռնությունների շարքում առանձնանում է նրա՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Նախագահ Եմիլիո Կաստրոյին օգնության խնդրանքով ուղղված անկեղծ Նամակը՝ գրված 1992 թ. հունվարի 17-ին («Էջմիածին», Ա-Բ-Գ, 1992, էջ 17):

Այս կոչին արձագանքելով՝ ՀԵՆ-ն Մայր Աթոռին է հատկացնում 1.200.000 դոլլար («Էջմիածին», ԺԲ, 1992, էջ 18):

Օգնության գործի կազմակերպումից բացի, ժնեի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարները, ընդառաջելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի գրությանը, դիմում են ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Դ. Բուտրոս Դալին՝ կոչով «սաստկացնել եւ ուժեղացնել» ջանքերը՝ Նախագուշացնելով հակամարտող կողմերին կանգնեցնելու ընդհարումը եւ հեշտացնել մի բանաձեւ, որով իրենց տարակարծությունները բանակցությամբ, ոչ թե բռնի միջոցներով լուծեն: Նամակը ստորագրված է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Եմիլիո Կաստրոյի եւ Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի ընդհանուր քարտուղար Ժան Ֆիշերի կողմից («Էջմիածին», Ա-Բ-Գ, 1992, էջ 19-20):

Վեհափառի մշտական մասնակցությունը համապետական «Ձմեռ» ծրագրին բարձր գնահատականի է արժանանում Գ. Հարությունյանի կողմից, որը կարելուում է Եկեղեցու մասնակցությունը ճշգրտամը հաղթահարելու գործում (Ասպարեզ, թ. 9644, դեկտ. 1, Գլենդել, 1993):

Չնայած սոցիալ-տնտեսական անբարենպաստ ժամանակներին՝ Եկեղեցի-պետություն հարաբերությունները որակական Նոր փուլ էին մտել, որը կարելի էր համարել բարեփոխումների շրջան: Կենցաղային բազմաթիվ խնդիրներ լուծող ժողովրդի կյանքում, թվում է, հակասություն էր հոգե-



ւոր վերազարթոնքը, սակայն միայն առաջին հայացքից. պետականորեն առաջինը քրիստոնեությունն ընդունած ժողովրդին վերադարձվում էին իր եկեղեցիներն ու աղոթատները, բազմադարյա հավատը:

Վազգեն Առաջինը յուրօրինակ հոգեւորական էր, ով հեռատես դիվանագետի պէս համոզված էր, որ «Արցախը մեզ համար ոչ միայն ազատագրական պայքարի խորհրդանիշ է, այլեւ մեր գոյապայքարը վճռականորեն շարունակելու ուղեցույց: Այն մի տեսակ մկրտարան է, սրբազան ավազան, ուր մտնելով եւ դուրս գալով՝ մաքրվում է հայ մարդը, վեհանում, հայրենասիրական լիցք ստանում: Մարկոսի Ա վետարանում ասված է՝ «Ով հավատում է, նրա համար անկարելի բան չկա»: Հավատացած եմ, որ մեր ժողովուրդը պիտի տեր կանգնի իր պատմական հողերին:

Հայ ազգը տեսիլք, երազ ունի եւ հավատացած է, որ մի օր ամբողջանալու է: Այսօր դա կարող է անհնար թվալ, սակայն, եթե ետ նայենք, մի՞թե երեկ Արցախի ազատագրությունը հնարավոր էր: Մինչդեռ այսօր ազատ է Արցախը: Այսօր անհնարին թվացող երազը վաղը կարող է իրականություն դառնալ: Ես սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ ողջ ազգն է այդ տեսիլքով ապրում» (Սուքիասյան Ս., Մի դափնեճյուղ Վազգեն Ա-ի հիշատակին. հողվածներ, հարցազրույցներ, «Նաիրի», Եր., 2004, էջ 141-142):

Թեեւ տարիներ շարունակ նրա կուրծքը զարդարեցին Ռումինիայի Պատրիարքի՝ «Ժողովուրդների բարեկամ» շքանշանը, ԽՍՀՄ «Պատվո նշան»-ը, Խաղաղության համաշխարհային կոմիտեի «Ժուլիո Կյուրի» մեդալը, Խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի ոսկե մեդալը, սակայն բարձրագույն պատիվը Նա համարեց իր սերելի ժողովրդի կողմից գնահատանքն ու անվերապահ սերը:

Շարունակությունը՝ էջ 4



Սկիզբը՝ թիվ 2, 4-8

Երկրորդ համաշխարհային պատերազմի առիթով 1944 թ. հունիսի 7-ին Թեքեյանը Կահիրեի գեղարվեստասիրաց սրահի մեջ ընթերցում է քերթողական իր վերջին մրմունջներից մեկը՝ Փրանսերեն գրված «Հայաստանը Ռուսաստանին» (կա այս բանաստեղծության Նաեւ արեւմտահայերեն տարբերակը՝ «Հայաստան առ Ռուսիա», որը թարգմանել է հենց հեղինակը) բանաստեղ-

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵԶ ԱՌԿԱԽ ՄԻ ԿՅԱՆՔ

Նվիրվում է Վահան Թեֆեյանի ծննդյան 140-ամյակին

ծությունը՝ Հայաստանը դիտելով որպէս ապագա բոլոր կարելիությունների միջոց ու հիմք: Նույն ամռանն այցելում է Պաղեստին: Երուսաղեմում, Հոպպեում եւ Հայֆայում կազմակերպվում են հանդիպումներ ու հավաքույթներ, որտեղ մեներգվել են «Պոլիս», «Կ'անձրեւէ, տղա'ս», «Զու յիշատակդ» բանաստեղծությունները: Գրողը պարզեւատրվում է Հայ երիտասարդաց միության «Բարերար անդամ» շքանշանով, վայելում Հ. Օշականի, Շ. Պերպերյանի եւ իր մի խումբ համակիրների ընկերակցությունը, գոհ մնալով իր ապրած այդ օրերից՝ Նորից վերադառնում է Կահիրե եւ շնչարգելությունից ու պնդերակությունից բուժվելու նպատակով մեկնում Ալեքսանդրիա, շուրջ մեկ տարվա ընդմիջումից հետո վերսկսում աշխատանքն «Արեւում»: Թեքեյանն այլեւս նման չէր ո'չ Նախկին «ղազեթիին» եւ ո'չ Էլ բանաստեղծական Նախկին «յոր-

դումներ կ'զգար կուրծքին տակ»: Բազում մտածումներ ու ասելիքներ մեկընդմիջտ պիտի «թաղուած մնային» նրա մեջ: Հոկտեմբերի վերջերին գրված մի Նամակում Նա արձանագրում է. «Կար չկար ծեր (Թեքեյանը 66 տարեկան էր այդ ժամանակ - Ա. Ա.) մարդ մը կար, որուն քերթող կ'ըսեին եւ որ վերջ ի վերջո, եկած էր, սիրած էր գալ Նոյն համոզումին՝ բայց ոչ առանց տխրութեան, ծեր մարդ մը, ծեր քերթող մարդ մը հետեւաբար, որ խոր ծերութեան հասնելէ քիչ առաջ, թերե'ս այդ համոզումին շնորհիւ՝ որ իր քերթուածներուն մէջ թափած սերերեն ցուց մը կը դարձնէր իրեն, զայն կը դնէր Նայունծքին, ձեւին ու ձայնին մէջ՝ որոնք իր խրտչոտ ու երկչոտ ըլլալովը, վերապահ ըլլալէ աւելի՝ գրեթէ կարծի ու չոր էին իր ամբողջ երիտասարդութեանն ու չափահասութեանն ալ ատենը» (Էջ 479, ընդգծումը - Ա. Ա.):

Այսպէս, տարիների հեռվից գրեթե սպառնիչ բնութագրելով իրեն ու իր քերթողությունը, Թեքեյանը վերոհիշյալ տողերում Նորից ու Նորից է շեշտում այն անհուն տխրությունը, որ ուղեկցել էր իրեն ողջ կյանքի ընթացքում:

Այդ տխրության պատճառները տարբեր էին, որոնցում հետին տեղ էին գրավում Թեքեյանի շրջապատն ու մանավանդ նրան վիճակված միայնակ կյանքը. «Դժուար է խնամող մը եւ տուն մը չունենալ մանավանդ: Առաջ այսպէս չէր բոլորովին. Ընտանիքի մը մէջ կ'ապրէի (Թեքեյանը նկատի ունի ծանոթ ընտանիքում ուր ժամանակ իր ապրելը - Ա. Ա.), մինչ հիմա սենեակի մը մէջ եմ միայն, երբ աւելի պետք ունիմ հանգստի, հոգածութեան» (Էջ 484):

Շարունակությունը՝ էջ 5

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Սկիզբը՝ թիվ 8

1917-1918 թթ. Չարենցը եղել է Կարի-նում եւ պատերազմական դեպքերի անդ-րադարձով գրել «Ազգային երազ», «Հատ-ված», քիչ ավելի ուշ՝ «Ամենապոեմ», «Չա-րենց-նամե» պոեմները, ինչպես նաեւ «Ող-ջակիզվող կրակ» շարքը: Ազգային մորմո-քի, անհուսությունից հույսի ճանապարհ ո-րոնելու տագնապնդում եւ գրված բոլոր այդ գործերը: Ահա բնորոշ տողեր «Հատ-ված»-ից.

*Մենք, լուռ, շվարել ենք, Եվ ո՞վ մեզ,
Լույսերս էլ ո՞վ մեզ,*

*Մարել ենք - Եւ ո՞վ պիտի տա-
Հույսերս էւ ո՞ւմ ենք տվել...*

Երկիր՝ իմ, թո՛ղք ու թեւեր...

Այս տրամաբանությամբ է կառուցված ամբողջ «Ողջակիզվող կրակ» շարքը, որ ունի ենթաշարքերի այսպիսի վերնագրեր՝ «Իրիկունը», «Վերադարձ», «Առավոտ»: Ի-րիկուն՝ մղձավանջ, Վերադարձ՝ փրկու-թյուն մահվան աշխարհից, եւ Առավոտ՝ վերածննդի սպասում: Այստեղ է, որ առա-ջին երկու գրքերի հերոսուհին՝ Տիրադա-լուկ աղջիկը, որ Նույն Կապույտ աղջիկն է, կերպարանափոխվում եւ դառնում է Բրոն-զե աղջիկ, Բրոնզե հարս, Կարմիր ամազո-նուհի: Այստեղ է նաեւ ռուսական հեղափո-խության հետ իր ժողովրդի փրկությունը կապելու ազգային խոր մորմոքը.

*Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես
երկիրս բախտազուրկ,*

*Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ -
Միտում է սիրտս հիմա որք, միտում է*

*սիրտս բախտազուրկ,
Միտում է սիրտս՝ ավերակ ու*

արնաներկ...
Եվ այս երգերը իմ կարմիր, ախ,

*այս երգերը իմ կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակուն -*

*Ինչպե՞ս պիտի արդյոք ինչեւ, ախ, այս
երգերը իմ կարմիր -*

իմ ավերակ, իմ ո՞րք երկրում...

Այս կարմիր երգերը մի քանի տարի նրան պետք է ոգեւորեին, մղեին ինքնամո-ռաց քայլերի՝ «Սոմա» (1918), «Ամբոխնե-րը խելագարված» (գրել է 1918-ին, տպագ-րել՝ 1919-ին), «Բոլորին, բոլորին, բոլորին: Երեք ռադիոպոեմ» (1920), հեղափոխու-թյանն ու նրա առաջնորդներին նվիրված բալլադները: Հետո արդեն այս ոգեւորու-թյունը պիտի սառչեր, վերածվեր հուսա-հատության եւ նրան մատներ խորունկ հիասթափության: Այսինքն՝ ազգային փր-կության այս սպասված «Առավոտն» էլ պիտի մթազներ:

Հայրենիքի ողբերգությունը Չարենցն ապրում էր ինքնակործանման եւ ինքնա-զոհաբերման տագնապնդում: Ասվածի ցայտուն վկայությունն է «Մահվան տե-սիլ» (1920) բանաստեղծությունը: Չարեն-ցը գրել է երեք «Մահվան տեսիլ»: Սա ա-ռաջինն է, որի մեջ հայ դասալիքների հա-մար Երեւանում կանգնեցված կախա-ղաններին ինքն էր ուզում օրորվել «Եղե-րական ու անբասիր», միայն թե վերջ տը-վի ժողովրդի ողբերգությանը: Բանաս-տեղծն այստեղ խտացնում է հայ ժողովր-դի պատմական ճանապարհի ամբողջ փիլիսոփայությունը՝ հայրենիքի բախտին ողջակեզ դարձնելով միմիայն իրեն: Դա մեր բոլոր անկումների ու պարտություն-ների վերջին ճիչն է՝ սկիզբ առած մեր ա-ռաջին պատմիչների ողբերից եւ վերջա-րած 20-րդ դարասկզբի սերնդի ճակա-տագիրը: «Մահվան տեսիլ»-ը դարձավ ժամանակի վերնագիր՝ Ատոմ Յարճա-նյանից (Սիամանթո) փոխանցվելով Եղի-շե Չարենցին, իսկ Վարուժանի կողմից վերամարմնավորվելով որպես «Ջարդ», Թումանյանի կողմից՝ որպես «Հոգեհա-սգիստ»... Սա ազգային ողբն էր՝ նոր կեր-պարանք առած:

Ազգային ողբերգության արձագանք-ներն առկա են նաեւ Չարենցի 1910-ական



թթ. մի քանի այլ բանաստեղծություննե-րում, որոնցում հայրենիքի ողբերգությու-նը ներանձնացած է անհատի քնարական ապրումների մեջ: Առավել հիշարժան են «Անկումների սարսափից», «Հայաստա-նին», «Ես իմ անուշ Հայաստանի արեւա-համ բառն եմ սիրում» գործերը: Մահվան անկումից Չարենցը ելք է որոնում եւ փոր-ձում ուղենշել դեպի Մասիս տանող վերել-քի ճանապարհը: Այդպես Մասիսը նրա համար պիտի վերածվեր ազգային գոյի հավերժական խորհրդանշանի: Մի դեպ-քում մահ ու անկում, շարունակվող ող-բերգություն, մյուս դեպքում՝ ազգային կյանքի համահավաք պատկեր, օրհներգ ու հիմներգություն՝ Մասիս սարի հավի-տենական խորհրդանշանով. «Ինչպես ան-հաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում»:

Ինչպես ամբողջ Առաջին համաշխար-հային պատերազմի իրադարձություննե-րին, այնպես էլ իր հայրենի Կարս քաղաքի անկման պատմությանն է նվիրված «Եր-կիր Նաիրի» վեպը (գրել է 1921-1924 թթ., առանձին գրքով տպագրել 1926-ին):

Ցեղասպանության եւ Առաջին համաշ-խարհային պատերազմի անդրադարձնե-րը 1920-ականներին արտացոլվեց «Խմբա-պետ Շավարշը» պոեմում: Չարենցը մտա-

դիր էր «Ապստամբությունը» վերնագրով չափածո վեպ գրել Առաջին համաշխար-հայինի, Հայոց ցեղասպանության եւ հայ ժողովրդի պատմական ճակատագրի մա-սին, որից սակայն մնաց միայն հիշյալ պոեմը: Այստեղ Հայաստանի Հանրապե-տության ժամանակներն են, որոնց Շա-վարշի հիշողության մտաբերումներով նա-խորդում են մեկ-երկու տարի առաջ կա-տարված իրադարձությունները, երբ խմ-բապետ Շավարշը, Խնուսից, Ալաշկերտից մի կերպ փախած հայության բեկորներին փրկելով, բերում էր Արեւելյան Հայաստան, ինչպես ինքն էր ասում՝ Ռուսահայաստան.

Խնուսից - Ալաշկերտ: Հետո Կարս:

Ցուրտ, մերկ, սով, տի՛ֆ:

Ինչքա՛ն, ինչքա՛ն մեռան,

Քաղցից, կամ ետ չէկան ֆրոնտից:

Ամբողջ ճանապարհը - դիակներ, մահ:

Ով որ մնաց՝ մնաց...

«Խմբապետ Շավարշը» պոեմում Չա-րենցը շատ նրբորեն օգտագործել է 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին տա-րածված հայդուկային ժողովրդական եր-գերի մոտիվները, ինչն իր հերթին խորից արթնացնում է անցյալ ժամանակների ող-բերական, երբեմն նաեւ հերոսական վերհուշը:

Շարունակությունը՝ էջ 6



Սկիզբը՝ էջ 3

1991-ի ապրիլի 30-ին Վեհափառին շնորհվեց ՀՀ ԳԱ պատվավոր անդամի դիպլոմ, իսկ բազմասպարեզ հայրենաշեն գործունեության, ազգային եւ հոգեւոր ար-ժեքների պահպանության եւ զարգացման գործում ունեցած ներդրման համար 1994-ի հուլիսի 29-ին, համաձայն ՀՀ կառավա-րության որոշման, Ամենայն Հայոց Կաթո-ղիկոս Վազգեն Առաջինին շնորհվեց «ՀՀ Ազգային հերոս» բարձրագույն կոչում եւ տրվեց «Հայրենիք» պետական բարձրա-գույն շքանշան:

«Մակդիմներ կան, զորս դժվար է գատել մարդեն, ժողովուրդն է, որ գանոնք կուտա, եւ պատմությունը կարճանագրե... Արտա-սահմանի մեր ժողովուրդը Վազգեն Կաթո-ղիկոսը տիտղոսած է «Սուրբ» մակդիրով. «Սուրբի պես մարդ է»: Հորդանանի արաբ ժողովուրդը, Նորին Ս. Օծուկյան Հորդա-նան այցելության առիթով Անոր տվալ «Հրեշտակ» մակդիրը: Ժողովուրդները կուտան այդ տիտղոսները, որովհետեւ են-

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱԶԳԱՊԱՀՊԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

թակային աչքին խորը եւ դեմքին վրա կտեսնեն լույսեր, տեսիլքներ՝ աշխարհեն ծաթած»,- Մայր Աթոռում պատարագի քարոզի ժամանակ ինչեւնում է Երուսաղե-մի պատրիարք Եղիշե արք. Տերտերյանը (ՀՀԱԱ, ֆոնդ 823, ց 6, գործ 83, էջ 79-80):

Պատկառանքն ու պատիվը սիրեցին Վե-հափառ Վազգեն Առաջինին եւ երբեք չհե-ռացան նրանից: Իր անձի մեջ նա կենտրո-նացրեց Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր հայրենանվեր կաթողիկոսների դիմագծե-րը՝ ի հակակշիռ ազգային Եկեղեցու ար-ժեքները կործանող ժամանակների:

Նրա ազգասիրությունը չէր ճանաչում հուսահատություն, գաղափարախոսա-կան պատնեշ կամ գերակա այլ արժեք՝ հայրենիքից ու ժողովրդից, Հայ Առաքելա-կան Եկեղեցուց ու Սբ. Էջմիածնից դուրս:

Ստեղծողի, կառուցողի, արարողի ու շի-նարարի հերոսական առաքելությամբ անցկացրեց իր ողջ կյանքը Հայոց կաթո-ղիկոսական գահի 130-րդ ժառանգորդը: Իր ներկայությամբ նա փաստեց, որ «Աթո-ռը չէ, որ կ'արժեւորե անձը, այլ գահակալն է, որը փառաւորե գահը: Էջմիածնի դարա-ւոր գահին վրայ միայն մեծերն են, որ տեղ պիտի ունենան» (*Ապրել գալիքի տեսիլ-քով. հուշեր Վազգեն Վեհափառի մասին, կազմեց Ա. Մարդյանը, Էջմիածին, 2008, էջ 123 (Վահրիճ Ճերճերեան, «Կեանքին եւ մտածողությանը ընդմեջ»):*

Ն. Ս. Օ. Ս. Ս. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը վախճանվեց 1994-ի օգոստոսի 18-ին: Այդ մասին գուժեցին

հանրապետական բոլոր թերթերը, ցա-վակցական հեռագրեր եկան աշխարհի տարբեր անկյուններից:

Հայոց Կաթողիկոսի մահը սգաց ամբողջ աշխարհի հայությունը: Արի հովվապետի ազդեցիկ կերպարին անդրադարձան տե-ղական, սփյուռքահայ, միջազգային բոլոր պարբերականները:

Աչքերը փակեց եւ ի Տեր հանգավ եւս մի հայրենաշեն կաթողիկոս, որ հաղորդու-թյան սուրբ հացի պես բաշխվեց իր ժո-ղովրդին՝ կյանքի 86 տարիների յուրաքան-չյուր ակնթարթի մեջ անմահացնելով իր երկիրը, իր հայրենիքը, Հայ Առաքելական Եկեղեցին:

«Նա թողեց, սակայն, նաեւ անկատար ե-րազանք, որի իրականացման համար թեւե չխնայեց որեւէ ջանք, մանավանդ գահակալության վերջին տարիներին: Այդ երազանքը Հայ Առաքելական Եկեղեցու միասնության եւ ավանդական նվիրապե-տության վերականգնումն էր, որը որպէս սուրբ պատգամ՝ հանձնեց մեր սերնդի խղ-ճին,- Վեհափառի հուղարկավորության ժամանակ իր դամբանականում ասել է ՀՀ առաջին Նախագահ Լեւոն Տեր-Պետրոս-յանը (*Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի. Ե-լույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, կազմող եւ խմբագիր՝ Ա. Սարգսյան, Հա-յաստանի Հանրապետության առաջին Նախագահի արխիվ, Եր., 2006, էջ 431: Այդ մասին տե՛ս նաեւ՝ Գ. արք. Զիֆթեան, Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Անթիլիաս, 1994, էջ 34):*

Նրա գործունեությունը բարձր արժեու-րում գտալ հետագա գահակալի՝ Ն. Ս. Օ. Ս. Ս. Գարեգին Ա Սարգսյանի դամբանա-կան խոսքում (*Գարեգին Ա, Հայրենիքը պատկերն է հայության, Գիրք Ա (քարոզ-ներ), Ս. Էջմիածին, 2000, էջ 174, Խոսք՝ արտասանված Վ. Ա. Կաթողիկոսի մահ-վան տարելիցի օրը շիրմի առջեւ, Նույն գր-քում՝ էջ 175-181, քարոզ՝ նվիրված Վազ-գեն Ա-ի մահվան առաջին տարելիցին):*

Ազգանվեր Կաթողիկոսի տապալանաքա-րի սպիտակ մարմարին քանդակված է Պո-ղոս առաքյալի միտքը, որը հաճախ էր սի-րում մեջքերել իր քարոզներում սիրելի Վե-հափառը. «Սեր երբեք ո՛չ անկանի»՝ որպես պատգամ՝ ուղղված ապագայում եղբայ-րության ու սիրո մթնոլորտում երկու Եկե-ղեցիները միավորված տեսնելու բաղձան-քի կատարմանը:

Վազգեն Առաջինի մոնումենտալ կերպա-րի հոգեթափ բարձունքն ազնվացրեց ոչ միայն իրեն, այլեւ այն ժողովրդին, որի ծնունդն էր ինքը. «Երանի նրան, ով նրա օ-րինակով, ինչպես որ ինքը մեր մեծ Նախնի-ների օրինակով, ազգի միության խորհուրդն ու խորհրդանիշն է լինելու, եւ այդ մարդու իր տիրական ներկայությամբ, մենք իշխանա-բար հպարտ, այրորեն զուսպ, զինվորաբար կորովի ենք մնալու, ինչպես որ էինք Վեհա-փառի կենդանությամբ, ինչպես որ Վեհա-փառի վարքն ու կերպարն էին պարտադը-րում մեզ» (*Մաթեոսյան Զր., Սպիտակ թղթի առաջ, Եր., 2004, էջ 342-343):*

*Լուսինե ՀԱՅՐԱՊԵՏԱՆ
Մանկավարժական գիտ. թեկնածու*

Սկզբը՝ թիվ 4-8

Առակը՝ որպես գրական ժանրատեսակ, բանահյուսական ծագում ունի եւ կարող է, ըստ պատկերված հերոսների, լինել մարդկային, կենդանական ու բուսական: Սովորաբար առակներում դիպաշարային մասին հաջորդում է բարոյախոսական ընդհանրացնող կարճ ու դիպուկ վերջաբան: Միջնադարյան առակներում դիպաշարային ու բարոյախոսական մասերը սովորաբար սահմանազատվում էին «Առակս գի՛նչ ցուցանե՛» արտահայտությամբ: Թեեւ Խ. Աբովյանը Մ. Գոշի եւ Վ. Այգեկցու նման այդ սահմանազատող արտահայտությունն ուղղակիորեն չի գործածել, սակայն վարպետորեն տեսանելի է դարձրել դեպք-գործողությունը եւ դրանից տրամաբանորեն բխող հետեւանք-բարոյախոսությունը: Նա հենվել է որոշակի ավանդույթների վրա, օգտագործել ինչպես հայկական ու արեւելյան մյուս ժողովուրդների մեջ շրջանառվող առակները, այնպես էլ ռուս եվրպական առակագիրների՝ Ա. Ն. Կռիլովի, Ժան դը Լաֆոնտեի, Ի. Ի. Խենկիցեի, Ի. Ի. Դմիտրիեւի եւ ուրիշների առակագրության հարուստ փորձը, կատարել նրանց լավագույն առակների թարգմանություններ ու փոխադրություններ՝ շատ դեպքերում հայացնելով դրանք:

Ժողովածուում ընդգրկված առակները, որոնք գերազանցապես բարոյախրատական եւ դիդակտիկ-ուսուցողական արժեք ունեն, Խ. Աբովյանը բաժանել է երեք մասի, որոնց տվել է համապատասխան անվանումներ՝ «Ասացվածք բնահայտը ինքնահարմար հորինվածք», «Առասպելք» եւ «Ասացվածք»: Բոլոր բաժիններում էլ հեղինակը ներկայացրել է հետաքրքրաշարժ, զվարճալի, տպավորիչ ու մտապահվող դեպք-գործողություններ՝ առա-

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)



վել հաճախ ընդգծելով դրանցից բխող խրատը կամ բարոյախոսությունը:

Առաջին՝ «Ասացվածք բնահայտը ինքնահարմար հորինվածք» բաժնում գետնված են այնպիսի առակներ, որոնց հերոսները մարդիկ են, մյուս բաժիններում՝ կենդանիներ, բույսեր եւ առարկաներ են, որոնց միջոցով նույնպես Խ. Աբովյանն այլաբանորեն պատկերել է մարդկային հարաբերություններ:

Յաճախ է պատահել, որ հմուտ մասնագետները, իրենց գործին կատարելապես

տիրապետողները թերագնահատվել են թերուսներից ու տգետներից, գիր չիմացողները հեզնել ու ծաղրել են գրագետներին: Արհեստավարժ եւ ուսումնասեր լինելը Խ. Աբովյանը համարում էր նոր սերնդի պարտականությունը եւ ներդաշնակ քաղաքացիական բարեկիրթ հասարակություն ստեղծելու գրավականը: Մինչդեռ հետամնաց իրականության մեջ իրենց չափը չհասնողները փորձել են արժեզրկել իր եւ ուրիշ արժանավորների դերն ու գործունեությունը: Այս մասին նա հստակ է արտահայտվել **«Էշն ու բլբլուկը»** չափածո առակի արձակ առաջաբանում. «Ես ներքեւի գրած ոտանավորը Էնպես մարդի վրա է գրած, որ ո՛չ գիր գիտի, ո՛չ գրի գորություն, ու գրողի վրա էլ՝ բերանը կցրվի: Իմ աշխարհաբան գրածների գլուխը՝ շատ անգամ է Էնպես բան տեսել, մարդի միտք չեն հասկանում, հենց իրանց իրանց խոսում են, մեկ օր էլ մեկից Էնպես բան իմացա, ու ինչ պետք է արած, լավ կըլի, որ դերձիկն իր գազը, մաշեկարն իր բիզը, փինաչին իր ճոնը, փռն չին իր գունդը լավ ճանաչեն, տեղները ծանր նստին, ամա չի ըլում: Ինձանից խրատ չի հասնում, ամա մարդի սրտին դարդ է դառնում, երբ Էնպես օքմին էլ ա մարդի վրա խոսում, որ իր անունը դրուստ գրել չի գիտի» (*Նույն տեղում, էջ 334*):

Թրիքում ծնված ու մեծացած Էշն ի՞նչ պիտի իմանար կոկոմ վարդի բույրն ու գեղեցկության հարգը, նրա բացվելուն տվայտանքով սպասող վարդասեր սոխակի սի-

րագեղ ձգտումն ու տառապանքը: Անտարբեր այս ամենին՝ սարից եկած էշը գռռալով արածում, պոկում եւ ակռաների տակ մշրում է դեռ չբացված վարդը, որը նրա «դարդակ փորին» համ էլ չի տալիս, այնինչ սոխակը լալիս է հոգու ծանր ցավից:

Առակի բարոյախոսականը հեղինակի ինքնամխիթարությունն է՝ դարձյալ այլաբանությամբ.

*Իմ սիրուն բլբլուկ՝ մի՛ Էդքան ցավի,
Կա՛ց մեր միջումը՝ քո վարդը գովի՛ր:
Էշը թրքումն ա իր ծնունդն առել,
Էլի թրքի հոտն նա կուզի առնել,
Քեզ վարդ, մակիշակ, քեզ ծառ ու ծաղիկ,
Աստված փայ տվել, բլբլո՛ւլ գեղեցիկ:*

Եթե դեպք-գործողությունն Աբովյանը վերցրել է հայկական որոշակի տարածաշրջանից, ապա ջանացել է պատկերվող հերոսների՝ այդ տարածաշրջանի մարդու բնավորության յուրահատկությունների հետ միասին տեղական բարբառի արտահայտչամիջոցներով անհատականացնել ու ոճավորել նրանց խոսքը՝ ջանալով հարազատորեն պահպանել խոսքի բնականությունը: Այսպես, օրինակ, **«Լոռքցիք»** առակում Լոռու բնաշխարհի մարդկանց ազնիվ միամտությունը հեղինակային պատումի հետ միասին ներկայացված է նրանց բարբառային երկխոսության միջոցով: Անգեն որսի գնացող երկու «իմաստուն» լոռեցիներ բավական չէ անտառում ծառի վրա աղավնի տեսնելուց հետո եւ մտածում տուն վերադառնալու եւ զենք բերելու մասին, դեռ վերադարձողն էլ ընկերոջը պահակ է կարգում, որ հանկարծ ծառին թանաճ որսը չփախչի.

Շարունակությունը՝ էջ 8

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՋ ԱՌԿԱՆ ՄԻ ԿՅԱՆՔ

Սկզբը՝ էջ 3

Ավելացնենք, որ միշտ էլ նրա բնական «սենեակները» «դամբանային» եղան, իսկ կերած հացը՝ լեղի, որի պատճառով էլ նա իր արցունքների հետ իր այդ դատապարտվածությունն է, որ կուլ էր տալիս ու իրեն վիճակված կյանքի մնացած մասն ապրում «կես մը մանուկի եւ կես մը ծերի վիճակով»: Եվ գուցե հենց դրա համար էլ նա իրեն հաճախ անվանում էր *«քարանձաւ», «աւերակ», «անապատ»,* մի անապատ, որ գնալով *«աւելի չոր եւ ճնշիչ կըլլար»:*

Չնայած այս ամենին՝ Թեքեյանը երբեք չիեռացավ ազգային հոգս ու ցավերից, մնաց նվիրյալ ազգային խնդիրներին՝ միշտ հավատալով, որ պետք է *«մէկդի նետել մտածումները եւ հաստատ կերպով... մղել ներկայ ամենօրեայ պոտիկ պայքարները, որոնց յաղթական ելքով է՝ որ վաղը հնարաւոր պիտի ըլլայ... մեծ պայքարը...»* (էջ 482):

Այս ընթացքում Թեքեյանն «Արեւում» տպագրում է անստորագիր մի քանի ջախջախիչ խմբագրականներ, որոնցից մեկն էլ՝ «Ի պատասխան հարեւաններու հանած անյարկի վլվլուքին», «Վերջին լոյս», «Նոր սեր», արդեն ենթադրում էին, որ գրողն այստեղ կատարում է մարդկային կյանքի ու սիրո տարաբնույթ եզրերի բացահայտումներ, սակայն գիրքն իր ամբողջության մեջ, բացառությամբ գրողի առաջին՝ «Յոգեր» ժողովածուի, զիջում էր իր նախորդներին՝ ընդհուպ այն աստիճան, որ Յ. Օշականն այն համարեց Թեքեյանի «միակ մեղքը» սուրբ գրի դեմ:

Եվ իրոք, մի շարք գործեր արհեստականության կնիքն ունեին, ներկայացվող ապրումներն ու հույզերը դրված էին որոշ կա-

ղապարների մեջ, գեղարվեստական հայտնություններն ու լուծումները աչքի չէին ընկնում թարմությամբ ու գրավչությամբ: Թեքեյանը թեեւ ստեղծում է ներքին տրամադրությամբ իրար հետ կապված մարդկային զգայնությունների որոշ ամբողջականություն, սակայն բանաստեղծությունների մի մասում պակաս են նրա պոեզիային այնքան բնորոշ խոսքի իմաստությունն ու բանաստեղծական խոհը, ասելիքի թանձրացումները, մտածման խորքայնությունը:

1945 թ., ինչպես ասում են, բանաստեղծական հունձը չբերեց Թեքեյանին եւ ոչ էլ առողջության կազդուրում: Տաք եգիպտոսում, ուր, Յ. Օշականի խոսքերով ասած, *«մարդուն միտքը կը լիսկի»*, Թեքեյանը *«կ՝ մրսեր»:* Կմրսեր հոգով, մտքով, բայց մանավանդ՝ շրջապատից բխող սառնությունից:

Շ. Շահնուրի բնութագրմամբ՝ «բարձր բարոյականի ջատագով», «միշտ վերապահ», «գերզգա» այդ մարդն ստիպված էր ամեն օր շփվել ազնվություն ու մտավորականի հոգի չունեցող «շուկայիկ մարդոց» հետ: Եվ այդ ազնվական մարդը, որ վեր էր նաեւ իր կուսակիցներից, նույնքան դժբախտ էր իր անձնական կյանքում, որքան որ միայնակ էր հասարակական շրջապատում:

Թեքեյանը 1945-ի սկզբներին ունենում է թոքի արյունազեղություն, սկսում է դժվարությամբ քայլել, առավել եւս դժվարությամբ գրել, անգամ կարդալու տկարություն զգալ:

Մարտին Թեքեյանը պառկում է Կահիրեի ֆրանսիական հիվանդանոցում: Ձեռքերի վերքերը եւ մանավանդ թոքերը ծայրագույն վատթար վիճակի էին հասել, հազը՝ այլեւս անտանելի. «Ամանկ չարչարուելով՝ պիտի մեռնիմ. Սանկ շնորհքով հիւանդութիւն մը ըլլար, քեզ քանի մը օրէն առնող տանող... բայց ասիկա՛ ... եօֆ...» (*տե՛ս Ժ. Յակոբեան, Թեքեան Վահան, Աստուածախոյզը, Գլենդել, 2009, էջ 216*):

Շուտով հիվանդի վիճակն այնքան է ծանրանում, որ բժիշկները խորհուրդ են տալիս քիչ խոսել, իսկ ավելի ստույգ՝ պահանջում են «բնաւ չխոսել»: Թեքեյանն այ-

լեւս մահճակալին գամված մարդն էր, մեռնակ, քան երբեւէ, եւ եթե չհաշվենք նրան «ընկերակցող» հիվանդությունները, կողքին չունէր ո՛չ հարազատներ, ո՛չ հոգատար ձեռքեր եւ ո՛չ էլ իր մտքին ու ձեռքերին այնքան տարիներ հավատարմորեն ծառայած գրիչը: Եղածն ընդամենը կարճ ժամանակով այցելած մի քանի համակիրներ էին:

1945 թ. ապրիլի 1-ին, որը Չատիկի տոն էր՝ փրկության, խաղաղության ու հույսերի տոն, այդ նույն հույսերով պարուրված, բայց եւ անհուսությամբ լեցուն հիվանդին քննելուց հետո բժիշկները եզրակացնում են, որ «հույս չկա»: Արդեն երեւում էին առաջին մահանշանները՝ դեմքի դեղնություն, անկանոն խոսք: Հիվանդը հաճախ էր խնդրում շուրթերին թրջած բամբակ մոտեցնել ու ինքն իրեն հազիվ շշնջում «սո՛ւ... ո՛ւս...», անգամ՝ բանավոր բանաստեղծություն անում. *«Յոգիս էր, հոգեակս կ'ուզես... Բայց հոգիս շուտ չեմ տար...»:* Ապրիլի 2-ին, շատ թե քիչ խնամք ապահովելու համար, Թեքեյանի մտերիմ բժիշկ Շահեն Սեւինյանը հիվանդին տեղափոխում է իր տուն, սակայն մեկ օր հետո Թեքեյանը խնդրում է իրեն տանել Հելիոպոլիսի իր բնակած սենյակը (առաջին հարկում բնակվում էր Միքայել Կյուրճյանը - Ա. Ա.), ուր նրան պետք է խնամեր վարձված օտարուհի (ավստրիացի) հիվանդապահուհին: Թե այդ կիսադատարկ ու անկահույք սենյակը բանաստեղծի թափառական կյանքի որերորդ բնակատեղին էր, ոչ ոք չի կարող ասել, բայց այն եղավ վերջինը: Իր գրած բանաստեղծություններից մեկում («Գեղջկական») Թեքեյանը երագում էր *«...ի մահ ընթանալ քիչ առ քիչ»*, սակայն այն իրեն շատ երկար սպասել չտվեց: 1945 թ. ապրիլի 4-ի վաղ առավոտյան՝ լույսը դեռ չբացված (4:30-ին), իր բնակած փոքրիկ սենյակում, գրողի կողմից այնքան «սպասված», բայց երբեք չսիրված մահն այցելեց նրան ու... մարեց լույսը, այն լույսը, որ նրա կյանքի ընթացքում միշտ էլ կիսալույս էր եղել եւ շատ հազվադեպ բացվել նրա համար:



Մահվանից առաջ Թեքեյանը խնդրել էր *«պարզ թաղում»*. *«արարողութիւն չեմ ուզէր, ծաղիկ չեմ ուզէր: Օ՛ր ... մանաւանդ ճառ չեմ ուզէր»* (Նույն տեղում, էջ 225): Հաշվի չառնելով գրողի փափագը՝ նրա աճյունը հաջորդ օրը տարվեց Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Հուղարկավորողների մեջ ծանոթ-բարեկամները քիչ էին: Մեծ մասը նրանք էին, ովքեր անտարբեր ու անհոգ էին եղել Թեքեյանի նկատմամբ, երբ նա ողջ էր, անգամ կային մարդիկ, որոնց գրողը չէր հանդուրժել երբեք:

Թաղման արարողությունը եղավ զուսպ ու պարզ, տիրապետող համատարած լուծությունն էր: Թեքեյանի մարմինն ամփոփվում է Կահիրեի Մար Միկայի գերեզմանատանը՝ իր դժբախտ գրչեղբայրներ Արփ. Արփիարյանի եւ Եր. Օտյանի շիրիմների հարեւանությամբ: Նոր «կացարանը» ոչնչով չէր տարբերվում նախորդ բնակատեղիներից. նույնքան մութ էր ու նույնքան միայնակ: Հետագայում Թեքեյանի աճյունը տեղափոխվեց Կահիրեի արվարձան՝ Հելիոպոլիսի գերեզմանատուն՝ իր բարեկամ գործընկեր Միհրան Տամատյանի շիրիմի մոտ, ուր մինչեւ օրս էլ հանգչում են կողք կողքի՝ Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության երբեմնի նախագահն ու այդ կուսակցության երբեմնի ատենապետը:

*Շարունակելի
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

ՄԻՒ 1243 Թ. Բ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ



Կիլիկյան Հայաստանի ժամանակաշրջանի Հայոց Եկեղեցու պատմության ուսումնասիրության համար չափազանց կարևոր են Սսի 1243 Բ Ժողովը եւ նրանում ընդունված կանոնական որոշումները:

ԺԳ դարի 30-40-ական թվականների պատմությունը քննելիս պետք է նշել, որ Հայաստանն այդ ժամանակ գտնվում էր շատ ծանր վիճակում՝ պայմանավորված մոնղոլ-թաթարական արշավանքներով: Այս ընթացքում հայերը ենթարկվում էին մոնղոլական ասպատակություններին: Չնայած այն փաստին, որ մի պահ մոնղոլական արշավանքները դադարեցին՝ կապված Չինգիզ-խանի մահվան հետ (1227), սակայն դրանք կրկին վերսկսվեցին 1232 թվականից: Բուն Հայաստանում

մոնղոլները գերի վերցրին Վանական վարդապետին եւ Կիրակոս Գանձակեցուն: Մոնղոլական լուծը ծանր էր, եւ վրացիներն ու հայերը ապստամբություն բարձրացրին զավթիչների դեմ: Դավիթ թագավորը եւ շատ մեծամեծներ ձերբակալվեցին: Ապստամբության պատճառով մեծ թվով բնակիչներ կոտորվեցին, կանայք անարատվեցին, հատկապես հարավային Հայաստանը ենթարկվեց մեծ ավերածությունների:

1241 թվականին Վարդան Արեւելցին կամ Մեծը Հռոմկլայում հանդիպում է Կոստանդին Կաթողիկոսի հետ: Վերջինս չուզեց բաժանվել նրանից: Ժամանակները ծանր էին, եկեղեցական կարգերը խաթարվել էին, հաճախակի էին դարձել ա-

մուսուլթյունները մերձավորների միջեւ, ամուսնաթողությունները, ապօրինի կենակցությունները, պահքերի անզգուշությունը, հեթանոսական բարքերի տարածումը, կաշառքով ձեռնադրությունները, եկեղեցիների խառնակեցությունը եւ այլն: Դրանց դեմն առնելու համար Հայոց Հայրապետն ու Վարդան Արեւելցին Հռոմկլայից 1243 թվականին գալիս են Սիս մայրաքաղաք եւ եկեղեցական ժողով գումարում: Պետք է նշել, որ ժողովին մասնակցում էին միայն Կիլիկյան Հայաստանի ներկայացուցիչները, եւ նրանից դուրս գտնվող Հայաստանի ու Փոքր Ասիայի եպիսկոպոսներին նույնիսկ հրավեր չուղարկվեց: Կոստանդին Կաթողիկոսը մտադրված էր անձամբ գնալ արեւելյան գավառները: Բայց չկարողացավ իր ուզածն անել ոչ միայն այն պատճառով, որ ծերացել էր, այլեւ այն հաշվարկով, որ ժամանակը բավականին սխալական էր: Այդ պատճառով երեք տարի սպասելուց հետո Վարդան Արեւելցուն՝ կանոններով հանդերձ, ուղարկեց Հայաստան, որպեսզի պտտվի գլխավոր վայրերում, թեմերում, երկրի իշխաններից, եպիսկոպոսներից ու վարդապետներից համաձայնության ստորագրություն վերցնի եւ այդ բոլորը մի տեղ հավաքի: Այս բոլոր մանրամասները ցույց են տալիս, որ Սսի 1243 Բ ժողովի որոշումները չէին կարող ազգային ժողովական կանոնի հեղինակություն վայելել, քանի որ իր կազմությունը կիսատ էր, եւ լրումը երեք տարուց հետո պիտի լիներ: Այս ժողովի կանոնական որոշումների ուսումնասիրությունը մեզ ցույց է տալիս, որ սրանք, բացի կանոնական գլխա-

վոր նյութերին անդրադառնալուց, ժամանակի զեղծումների վերաբերյալ պատշաճ կարգադրություններ են, որոնք շարունակ փոփոխման ենթարկվող կետեր են: Պետք է նաեւ նշել, որ չի պահպանվել այդ որոշումների վավերական պատճենը: Իսկ Կիրակոս Գանձակեցու առաջ բերած շրջաբերականի մեջ Կոստանդինն այնպես է հաղորդում ժողովական որոշումները, որ ավելի իր անձնական առաջարկություններն են երեւում, քան թե ժողովական ուժով խմբագրված հրամաններ:

Սսի 1243 Բ ժողովը գումարվել է Հայոց Կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդի Կաթողիկոսի (1221-1267) եւ Հայոց Հեթում (1226-1270) արքայի կառավարման ժամանակ, եւ որը, սակայն, մինչեւ օրս չի ենթարկվել լուրջ ուսումնասիրությունների: Այս ժողովի առանձնահատկությունն այն է, որ կայացված որոշումներն արտացոլում են ժամանակաշրջանի հայ ժողովրդի կենցաղը: Այս ժողովը պահի թելադրանք էր եւ անխուսափելի: Այն գումարվել էր նշյալ շրջանում ստեղծված հոգեւոր ու մշակութային ծանր վիճակը թեթեւացնելու հրահանգով:

Անկախ ամեն ինչից, պետք է նշել, որ Սսի 1243 Բ եկեղեցական ժողովի որոշումները շատ մեծ նշանակություն ունեին, քանի որ արտացոլում էին ժամանակաշրջանի արատավոր բարքերը: Ժողովում ընդունվեց 25 կանոն, որոնք Մաղաքիա Օրմանյանը խմբագրում է՝ դրանք ներառելով հինգ խմբերի մեջ, որոնք են՝ կանոնական, բարեկարգական, բարոյական, քահանայական, զիջողական գլուխները:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ...

Սկզբը՝ էջ 4
Հայաստանի պատմական ճակատագիրը լավագույնս արտահայտվեց «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ: 1915 թվականի եւ ընդհանրապես ցեղասպանության արձագանքներն առկա են «Պատմության քառուղիներով», «Մահվան տեսիլ» պոեմներում, «Պատգամ» եւ մի շարք այլ բանաստեղծությունների մեջ: «Մահվան տեսիլ» պոեմում շարադրելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը՝ Չարենցը հասնում է դարավոր ոսոխի ոճրագործություններին, այնուհետեւ նկարագրում արեւմտահայ գրողների արյունոտ մայրամուտը: Իր ժողովրդի դարավոր մաքառումների ճանապարհին Չարենցն ուղղում է փիլիսոփայական հայացք: Ցեղասպանության արձագանքներն առկա են բոլոր գործերում: Ընդ որում՝ Չարենցն այդ ամենի մասին գրում էր այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայրենիքի, ժողովրդի պատմական անցյալի, ազգային հնավանդ մշակույթի հիշողությունը քրեորեն դատապարտվում էր որպես նացիոնալիզմ, դրան հետեւող բոլոր անցանկալի հետեւանքներով հանդերձ՝ կալանք, աքսոր, գնդակահարություն: Ընդամենը մի քանի տարի առաջ թուրք սուլթանը հայերին արգելել էր «հայրենիք» բառն օգտագործել, իսկ ռուսական ցարը փակել էր հայկական դպրոցները, այսինքն՝ ամեն ինչ արվում էր ազգային հիշողությունը ոչնչացնելու համար: Նույնը՝ ավելի դաժան հալածանքների պայմաններում հիմա անում էր ստալինյան վարչակարգը: Եղեռնի մասին խոսողն ինքն էր արդեն դատապարտվում բոլշեւիկյան եղեռնի: Ահա այս պայմաններում անգամ Չարենցը դիմում է հերթական անձնագրի հերոսության եւ արթնացնում մոտիկ անցյալի հիշատակները: Այս տեսակետից Չարենցի հանճարի բարձրագույն արտահայտություններից է «Մահվան տեսիլ» պոեմը (1933). ունի Ատոմ Յարճանյանից բնաբան՝ «Կոտորած, կոտորած, կոտորած...»: Պոեմում շարադրված է ազգային-ազատագրական պայքարի պատմությունը, որտեղ խոսվում է եւ՛ «գազան արքայի»՝ սուլթան Հա-

միդի ոճրագործությունների, եւ՛ ՀՅԴ գործունեության, եւ՛ արեւմտահայ բանաստեղծների ու մտավոր մի ամբողջ սերնդի կյանքի արյունոտ մայրամուտի մասին: Ահա ամբողջ եղեռնի ողբերգությունը խտացնող պատկերներ.
*Սրածված սերունդներ՝ էին արդ
անցնում, քաղաքներ քանդած,
Հեղեղի պես պրծած, տեղահան,
գնում էր երկիր մի ամբողջ,-
Անցնում էր արմատից պոկած, անխնա
կտրած մի անտառ,-
Սարսափած նախիրի նման՝ սպանդից
փախած մի ամբոխ...
...Մանուկներ տկլոր, անատամ
աղջիկներ, ծերեր հաշմանդամ,
Գլուխները բռնած ձեռներին, վայրենի
լացով ու ճիչով,
Թռչկոտում էին ու պարում. -
ցատկոտում էր կարծես մի անտառ,-
Եվ անցնում էինք մենք դանդաղ այդ
պարող անտառի միջով:
«Դանթեական առասպել»-ից հետո
վերստին հառնում են դանթեական դժոխքի
պատկերները, որովհետեւ Չարենցը տեսնում էր, թե ինչպես է նախամարդը
արշավում, թե ինչպես է ժամանակը ետ
թռչում եւ օրերի խորհրդանշան դարձնում
մարդանման կապիկին.
Մեր ոտքերը դիպչում էին սուր, փշերի
նման քարերի,
Ծառերի ճյուղերը՝ կանանց մատների
նման գալարուն՝
Չանգոռոտում էին, արնոտում մեր
դեմքերը,- եւ հին դարերից
Նախամարդն էր արդեն արշավում՝
աչքերում մոլուցք ու արյուն:
Ժամանակը ե՛տ էր թռչում արդեն խուլ
աշխարհի վրայով,
Մարդակերպ Կապիկն էր արդեն
արշավում հետքերից մեր նորից,-
Եվ լուսինը, անգոր ժպիտով ծառերի
արանքից նայող,
Մեզ թվում էր բարի մի աստված,
որ փրկում է ջրից ու հրից...*

Սա՛ էր ճշմարտությունը, եւ նացիոնալիստ հորջորջվելու հալածանքի պայմաններում անգամ Չարենցն այլեւս չէր կարող լռել:
Այսպես կամ այս կերպ ցեղասպանության արձագանքն առկա է «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ զետեղված «Տաղ ծոնված մեռյալների», «Պատգամ» բանաստեղծություններում, այլ գործերի գաղտնագրված բազմաթիվ տողերում:
Ահա այսպես 1930-ական թվականների ստալինյան քաղաքական ծանր հալածանքների պայմաններում, երբ ամեն ինչի համար պատրաստ էր նացիոնալիզմ մեղադրանքը, Չարենցն ամենեւին չընկրկեց, երբեք չմոռացավ իր ժողովրդի մոտիկ տարիների ողբերգական պատմությունը եւ այն ոգեկոչեց նորանոր գործերում՝ «Կոմիտաս» (1935), «Կոմիտասի հիշատակին» (1936), «Որպես գորշ դեղին տերեւներ» (1936-1937) պոեմներում, «Դոֆինը նաիրական» շարքի որոշ սոնետներում եւ առանձին բանաստեղծություններին մեջ:
Վերջին պոեմը հայրենի հողի եւ ժողովրդի միասնության պատգամն է. Չարենցը տեսնում էր, որ սուլթան Համիդ - Երիտթուրքեր - Զեմալ Աթաթուրք հայակործան դաշինքը շարունակվում է Ստալին - Բերիա - Բաղիրով խորհրդային ինտերնացիոնալ եղբայրության դավադրությամբ: Դարձյալ հայահալած քաղաքականություն, բռնություններ ու ժողովրդի արտահոսք, ինչն ավարտվեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ադասի Խանջյանի սպանությամբ եւ նրա հաջորդի՝ վերոհիշյալ եռյակի կամակատար Ամատունու դիմումով ՀամԿ(Բ)Կ Կենտկոմ՝ 1937-ին Հայաստանում մարդամթերման պլանները մեծացնելու նախաձեռնությամբ:
Իսկ այս ամենի դիմաց Չարենցը կոփում էր հայոց ոգին.



*Անձրեւի, ցրտերի, շոգի,
Տանջանքի, սովի, հարվածի,
Մենության, դառնության, լացի
Բոցերում կարծրացած, օ, ոգի՛...
Օ, ոգի, օ, սաղմ նաիրյան
Հանճարի,- օ, ինքնություն,-
Աշխարհում չկար ո՛չ մի թույն,
Որ լուծեր հյուլեն քո արյան...
Օ, պի՛րկ, անհարի՛ր, անլույծ,-
Միացման չենթակա տարր,-
Տարամերժ, օ, տարր դու օտար,
Որ հորդել ես դարեր անդադար
Ինքնաբուխ սեփական լույս...*
Ամբողջ գիտակցական կյանքով Չարենցն ապրեց իր ժողովրդի պատմական ճակատագիրը. դարձավ նրա կործանվող հույսերի ողբերգակը եւ վերածնության իղձերի ազդարարը: Գիտակցական կյանքի առաջին քայլից մինչեւ ամենավերջին մտահղացումները Չարենցը ծանրագույն ցավով վերապրեց եւ պատկերեց իր ժողովրդին վիճակված ցեղասպանության ամբողջ ողբերգությունը:
Դավիթ ԳՍՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՆԱՏԵՂԾԱԿԱՆ ՀԱՆՃԱՐՆ

ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԻԷ

Ձորջ Բայրոն - 230

Հայ ժողովուրդը հնուց անտի, իր հանճարի ու ստեղծած հոգեւոր արժեքների շնորհիվ, գրավել է շատ ու շատ այլազգի մեծերի ուշադրությունը, արժանացել նրանց սիրուն ու գնահատանքին, վայելել նրանց անկեղծ բարեկամությունը: Այդպիսի մեծերից է համաշխարհային պոետական մտքի տիրակալներից մեկը՝ Ձորջ Բայրոնը: Հայտնի իրողություն է, որ նա մեծապես հետաքրքրվել է հայ մշակույթով, Վենետիկի Միսիթարյանների մոտ սովորել հայերեն:

Առաջին անգամ Բայրոնը ոտք է դնում Սուրբ Ղազար 1816 թ. դեկտեմբերի 1-ին: Այդ առթիվ վանքի միաբաններից Հարություն Ավգերյանն իր «Ինքնապատում օրագրության» մեջ գրում է. «Դեկ. 1-ին մեծահռչակ եւ աշխարհաբարոզ անգլիացի բանաստեղծ Lord Byron-ը, որի գրվածքները ոսկու արժեք ունին, այցելության եկավ մեր վանքը... Նա աշխույժ, ուրախ բնավորությամբ եւ կրակոտ աչքերով մի երիտասարդ էր. թեեւ կաղ էր մի ոտքից, բայց գեղեցիկ էր դեմքով»:

Առաջին օրը Բայրոնը հայոց կղզում մնում է երկու ժամ: Հարություն Ավգերյանը, Սուքիաս Սոմայանը եւ մյուս վանականները սիրալիր ընդունելություն են ցույց տալիս նրան: Ավգերյանը Բայրոնին առաջնորդում է վանքի գրադարան: Այստեղ նրան ցույց են տալիս մագաղաթյա թանկարժեք նմուշներ հայ հին գրչագրերից, այդ թվում եւ Մլքե թագուհու պատմական նշանավոր Ավետարանը, ինչպես նաեւ հազվագյուտ թարգմանություններ հունարեն կորած բնագրերից, ասորերենից եւ պարսկերենից: Բայրոնը ծանոթանում է հայ բանաստեղծության, նկարչության եւ ճարտարապետության ընտիր նմուշներին: Բանաստեղծը մեծ գոհունակությամբ վերադառնում է Վենետիկ՝ խոստանալով կրկին այցելել:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ի վաղ առավոտյան, Բայրոնը նորից է գալիս: Նա շարունակում է հիացմունքով եւ ուշիուշով թերթել վանքի Գրչագրաց մատենադարանի հին ձեռագրերը եւ ծանոթանալ մեր մշակույթի նորատես գանձերի: Այցելում է վանքի տպարան եւ Ավգերյանի հետ երկար

կար գրույցի բռնվում հայոց պատմության ու մատենագրության շուրջ: Բայրոնը հաճախակի հարցեր է տալիս հայ գրականության, մասնավորապես պոեզիայի մասին, Ավգերյանը սիրով եւ պատրաստակամությամբ պատասխանում է այդ հարցերին: Բանաստեղծը շրջում է կղզում, զմայլվում նրա գեղեցկությամբ: Չրույցի վերջում Բայրոնը խնդրում է աբբահայր Ադոնցին եւ վարդապետ Ավգերյանին թույլ տալ իրեն բնակվել վանքում՝ հայոց լեզուն սովորելու եւ հայ մշակույթին առավել հանգամանակից ծանոթանալու համար: Աբբահայրը մերժում է բանաստեղծի՝ վանքում բնակվելու խնդրանքը՝ պատճառաբանելով, թե ոչ ոք նրան չի ճանաչում, բայց ասում է, որ նա ամեն օր կարող է Վենետիկից գալ եւ այնպես սովորել:

Վանականների մերժումը պայմանավորված չէր սոսկ կրոնական հանգամանքներով, այլ ուներ մեծապես քաղաքական դրդապատճառներ. Բայրոնը, բանաստեղծ լինելուց զատ, նաեւ անվանի քաղաքական դեմք էր, մասնավորապես Լորդերի պալատում ունեցած իր երկու հայտնի ելույթներից հետո, ավելին՝ նա տարագրված էր Անգլիայից, ուստիեւ աբբահայրը խուսափում է վանքում նրան կացարան հատկացնելուց՝ վախենալով այդ քայլի քաղաքական հետեւանքներից: Վանականները, սակայն, միաձայն խոստանում են բանաստեղծին ամեն հարմարություն ստեղծել՝ իրենց վանքը հաճախելու, հայերեն սովորելու եւ հայ մշակույթին ավելի մոտիկից ծանոթանալու համար: Երկօրյա այցելությունների ընթացքում ստացած տպավորություններն այնքան խոր են լինում, որ երիտասարդ պոետը սիրով ընդունում է վանահոր առաջարկը. սկսվում են Բայրոնի հայերենի դասերը, ուսուցիչը վանքի միաբան, վարդապետ Հարություն Ավգերյանն էր, առաջին պարապմունքը լինում է դեկտեմբերի 3-ին:

Դեկտեմբերի 9-ին Մըրրեին ուղղված նամակում Բայրոնը գրում է. «Սկսել եմ եւ առաջ եմ տանում իմ հայոց լեզվի ուսումը, որը ես հաղթահարում եմ ուժերիս չափով, հայոց Մենաստանում, ուր ես հաճախում եմ ամեն օր, դասեր առնելու մի գիտնա-



կան արեղայից եւ ձեռք եմ բերել մի շարք եզակյա եւ օգտակար տեղեկություններ այդ արեւելյան ժողովրդի գրականության եւ բարքերի վերաբերյալ: Նրանք մի հաստատություն ունեն այստեղ՝ մի եկեղեցի եւ վանք՝ 90 արեղաներով, որոնցից ոմանք շատ գիտուն եւ զարգացած մարդիկ են: Նրանք ունեն մի տպարան եւ մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսավորելու համար: Հայերեն լեզուն (որ կրկին է՝ գրաբար եւ աշխարհաբար) ես գտնում եմ դժվար, բայց ոչ անհաղթահարելի (գեթ այդպես հույս ունեմ)»:

Հայոց լեզվի ուսուցմանը զուգահեռ՝ Ավգերյանն իր անգլիացի սանին հրամցնում է նշխարներ մեր հին եւ միջնադարյան գրականությունից: Հայերենից բացի՝ նրան տալիս է հայոց պատմության դասեր, որոնք Բայրոնն ունկնդրում է համակ ուշադրությամբ՝ հայացքը երկար հառելով վեհատես Արարատի նկարին, որ կախված էր դիմացի պատին:

Բայրոնն իր ուսուցչին անվանում էր «հայր Պասկալ», իսկ Ավգերյանը նրան՝ խենթ՝ հենց երկրորդ հանդիպումից՝ «... նրա մեջ նկատելով մի որոնող, պրպտող, անհանգիստ ոգի, մի անսովոր մարդ, որ բուն ցանկություն է հայտնում ծովի ջրե-

րը ճեղքելով ամեն օր Վենետիկից գալ եւ մի անծանոթ ազգի լեզու սովորել այդ կղզու վրա», - գրում է Խաչիկ Դաշտենցն իր «Բայրոնը եւ հայերը» գրքում: Բանաստեղծի՝ դեռեւս 1818 թ. հունվարի 27-ին Մըրրեին գրած նամակից երեւում է, թե ինչպիսի բարեկամական հարաբերություններ են հաստատվել նրա եւ իր ուսուցչի միջեւ. այդ նամակում Բայրոնն Ավգերյանին անվանում է «իմ հայրը, Հարություն հայրս»:

Հայերենի դասերից հետո հանճարեղ անգլիացին ժամերով մնում էր կղզում, երկար գրուցում վանականների հետ՝ փորձելով կենդանի խոսքի միջոցով ամրապնդել իր յուրացրած բառամթերքն ու քերականական կանոնները: Սոմայանի եւ Ավգերյանի հետ սիրում էր շրջել կղզու գեղատեսիլ ափերին՝ գրուցելով հայոց պատմության, լեզվի, գրականության եւ հայ ժողովրդի ճակատագրի շուրջ:

Լորդ Բայրոնը հայոց վանքում հայերեն է սովորել մի ամբողջ ձմեռ՝ 1816 թ. դեկտեմբեր եւ 1817 թ. հունվար-փետրվար ամիսներին: Այդ ժամանակահատվածում նա հիսուն լրիվ օր հաճախել է պարապմունքների՝ օրական սովորելով երկուսից-երեք ժամ: Բայրոնի ամենամտերիմ բարեկամ, անգլիացի ականավոր բանաստեղծ Թոմաս Մուրն իր «Բայրոնի կյանքը» գրքում (Նյու Յորք, 1867) գրում է. «Նա սովորաբար առավոտյան մի մասը նվիրում էր հայերենի ուսմանը Լազունի կղզիներից մեկի վրա՝ հայ վանականների մենաստանում»:

Կենսագիրը 1819 թ. օգոստոսի 29-ի նամակում գրել է. «Մի ամբողջ ձմեռ ամեն առավոտ դուրս գալով եւ գոնդոլա մտնելով, որն ինքը մենակ թիավարում էր, լողում էր դեպի հայոց կղզին (մի փոքր կղզյակ, որ գտնվում էր Վենետիկից կես մղոն հեռու՝ մի խաղաղ լճածոցի մեջ)՝ վայելելու համար գիտուն եւ հյուրընկալ վանականների ընկերությունը եւ սովորելու նրանց դժվար լեզուն. իսկ երեկոյան նորից իր գոնդոլան մտնելով՝ վերադառնում էր քաղաք»:

Բանաստեղծի կյանքի հակիրճ ժամանակագրության մեջ բոլոր օտարազգի աղբյուրները նրա՝ 1816 թ. վերջին ամիսների կյանքը սովորաբար բնորոշում են հետեւյալ նախադասությամբ՝ «Սովորում է հայերեն»:

Բայրոնի՝ հայերեն սովորելը, սակայն, երեք ամսով չի ավարտվել. հետագայում եւս նա զբաղվել է հայերենով եւ նրա վերաբերյալ գիտելքները խորացնելու նպատակով երկու տարի շարունակ գնացել-եկել Սուրբ Ղազար:

Շարունակությունը՝ էջ 8

Հայոց մարդասիրական ճեմարանի 197-ամյակը



Ապրիլի 2-ին մեծ շուքով նշվեց Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի 197-ամյակը՝ հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Մովսէս արք. Սարգսյանի հանդիսապետությամբ: Միջոցառմանը ներկա էին Հնդկաստանում ՀՀ դեսպան տիար Արմեն Մարտիրոսյանը, Կալկաթայում

ԱՄՆ-ի հյուպատոսարանի հասարակական բաժնի տնօրեն Ջեյմի Դրագոնը, Ս. Նազարեթ հայոց եկեղեցու վարչության անդամները, հնդկահայեր, հյուրեր, ճեմարանի ուսուցիչներն ու աշակերտները:

Միջոցառումը մեկնարկեց Տերունական աղոթքով, որին հաջորդեցին Հայաստանի Հանրապետության, Հնդկաստանի

Հանրապետության եւ Հայոց մարդասիրական ճեմարանի օրհներգերը՝ երգչախմբի կատարմամբ: Այնուհետեւ դպրոցի տնօրեն պարոն Սումիտրա Մալլիկը ներկայացրեց 2017-2018 թթ. ուսումնական տարվա հաշվետվությունը: Խոսքով հանդես եկան ՀՀ դեսպանը եւ ԱՄՆ-ի հյուպատոսարանի ներկայացուցիչը:

Ճեմարանի աշակերտների անունից շանորհակալության խոսքով ելույթ ունեցավ ավարտական դասարանի աշակերտ Գեորգ Մկրտչյանը: Միջոցառումը համեմվեց ճեմարանի քառաձայն երգչախմբի կատարումներով, ինչպես նաեւ ազգային պարերով: Աշակերտները ներկայացրեցին նաեւ ճեմարանի վաստակաշատ ուսուցիչ Արինդրաջիտ Սահայի հեղինակած անգլերեն լեզվով դրաման:

Հայոց մարդասիրական ճեմարանի ավանդության համաձայն՝ լավագույն սովորող անվանակարգում ճեմարանի արծաթե մեդալով պարգևատրվեց 10-րդ



դասարանի աշակերտ Վլադիմիր Միսնայանը, իսկ լավագույն մարզիկ անվանակարգում՝ 9-րդ դասարանի աշակերտ Ազատ Պապյանը: Արժեքավոր նվերներ ստացան ավարտական դասարանի աշակերտները:

Ճեմարանի կառավարչի կողմից պարգևատրվեց նաեւ մաթեմատիկայի եւ ֆիզիկայի ուսուցիչ պարոն Պաբիտրա Սենը:

Միջոցառումն ավարտվեց Մովսէս արք. Սարգսյանի օրհնության խոսքով: Ապա ներկաները վայելեցին ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին աշակերտների պատրաստած ասեղնագործություններն ու նկարները:

Լրատվական Նյութերը՝ ՄԱՅՐ ԱՊՐՈՒ ՄՈՒՐԷ ԷԶՄԱԿՍԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Սկզբը՝ էջ 5

Հենց մտան մեշեն, մեկ ծառի վրա
Տեսան, որ մեկ չաղ չաղ աղավախ կա:
Ընկերի մեկը մյուսին ասեց.
«-Տյեղս կա՛ց, քընամ, տյանիցն

յաղ պիրեն,

Հլե յես սիյաթին, ես քըմատաղ եմ,
Ատյա՛ մեր տոյա՛ մեր պյախտը պյանեց,
Շուտով յետ քըքյամ, հես թըվավորյին

Լյալ հյաջը պյոնի՛, մյա հես ծյառին»:
«Չըղրեխը» առական պատկերված է գա-
վեշտաողբերգական իրավիճակ. պան-
դուխտ մշեցին իր ընտանիքի հոգսերը թեթե-
ացնելու նպատակով է մեկնել օտարություն
եւ որոշել է աշխատել բամբակի հունդերը
գատող իր չտեսած ու չգործածած սարքով՝
չըղրեխով: Սակայն անփորձ պանդուխտն
այդ սարքի որոգայթում իր մորուքն է խճճում:
Փաթաթված մորուքն ազատելու եւ այդ սար-
քը ճիշտ գործածելու կերպը պանդուխտը ա-
ղերսելով հարցնում է մեկ ուրիշ հայից՝ մշո
բարբառով: Այդ աղերսանքը, որ բխում է ծի-
ծաղաշարժ իրադրությունից, նաեւ ներկա-
յացնում է հուսահատ պանդուխտի անօգնա-
կան ընտանիքի ողորմելի վիճակը:

Ախպեր՝ քո խոքուն դուրբան եղնիմ՝ խա՛յ՝
Չըղրեխն՝ որ կըսեն, ես ի՞մալ գատ ա:
Չողուխ ու լաջերս տուն եմ վոնդել,
Չըմեն ֆուխարա մեր օլքեն թորգել,
Քալել ես վալիաթն, օր չըղրեխ քաշեմ,
Տանիմ գիմ քուվաթն պախեմ, կերակրեմ:

Խ. Աբովյանը, առակներում ներկայացնե-
լով այս կամ այն դեպք-գործողությունը, սո-
վորաբար այն ավարտում է դրանից բխող
բարոյախրատական եզրափակիչ ընդհան-
րացումով, որովհետեւ նրա գեղագիտական
բուն նպատակադրումն առակների միջոցով
ընթերցողին դաստիարակելն է: Առակնե-
րում պատկեր ստեղծելիս նա, իհարկե, ա-
զատորեն կիրառել է գեղարվեստական
պայմանականության եւ պատկերավորման
տարբեր ձեւեր՝ անձնավորում, ֆանտաս-
տիկա, չափազանցում եւ այլն՝ ջանալով
մնալ հավանականի եւ ճշմարտամանու-
թյան սահմաններում: Մարդկային խոսքը
բնական է, սակայն երբ բնության երեւոյթը,
կենդանին, ծառը, իրն են «խոսում», «մտա-
ծում» կամ «դատողություններ անում»,

ԽԱՉԱՆՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)



նրանց վերագրված մարդկային խոսքը
պետք է բխի իրադրությունից եւ լինի ոչ
միայն հնարավոր ու հավանական, այլեւ ճշ-
մարտամանությունից վերածվի կենսա-
կան ճշմարտության, որ լինի գեղարվեստո-
րեն համոզիչ:

Կենդանիների «հարցուպատասխանը»,
պղնձի «ծնելն» ու «մեռնելը», երկաթակեր
մուկն ու հացակեր փեշը, ժանտ փուշը,
ծառերն ու կացինը, խոզն ու եզը, էշն ու բլ-
բուլը կարող են միմյանց հարաբերվել, ե-
թե այդ պայմանական առնչակցությամբ
ներկայացվում են իրական կենսական
դեպքեր եւ մարդկային բնական հարաբե-
րություններ: Այս իմաստով լավագույննե-
րից մեկը «**Հացակեր փեշը**» խորագրով ա-
ռակն է, որով հեղինակը ծաղրել է ամբո-
խային հոգեբանությունն ու մարդուն
հարստությամբ, պաշտոնով կամ հագուս-
տով արժեւորելու տխուր սովորույթը, որի
պատճառով էլ մարդիկ գնահատվում են
ոչ ըստ իրենց իրական արժանիքների: Մե-
ծահարուստ, շքեղ հագնված մի մարդ
կասկածում է այն հանդիսավոր շողջոր-

թություններին ու փցուռույց մեծարումնե-
րին, որ ցուցաբերում են մարդիկ իր անձի
հանդեպ: Մշտատե՛ւ են արդյոք այդ մեծա-
րանքները, իսկ եթե ինքն աղքատանա,
հագուստները հնանան, նույն մարդիկ
կշարունակե՞ն արդյոք հարգանք ու պա-
տիվ մատուցել իրեն: Ստուգելու համար
կերպարանափոխվում է մարդը, նույն մի-
ջավայրին ներկայանում աղքատի հնա-
մաշ զգեստներով: Բայց ոչ ոք չի ճանա-
չում նրան, պատվասիրելու փոխարեն
արհամարհում են հրապարակալ: Իսկ
երբ կրկին ներկայանում է շքեղ հագուստ-
ներով, նույն մարդիկ նրան մեծարում եւ
խնջույքի ճոխ սեղանի մոտ ցուցադրա-
բար նորից պատվասիրում են: Առակի հե-
րոսը բոլորի ներկայությամբ իր հագուստի
փեշին է հորդոր կարդում՝ կե՛ր, ասում է,
այս պատիվը քեզ են տալիս, ոչ թե ինձ:
Սրան հաջորդում է հեղինակի եւ հերոսի
բարոյախոսականը:

Մարդին մարդ շինողն թե չորն է էլած՝
Գնա՛նք մեր սարը, անիծվի՛ ես հացն:

Ասացինք, որ երկրորդ եւ երրորդ բաժին-
ներում կերպավորված հերոսները հիմա-
կանում անձնավորված բույսեր են ու կեն-
դանիներ, որոնց միջոցով Խ. Աբովյանը
մարդկային արատներ է ծաղրում, քննա-
դատում ինքնահավանությունն ու գոռոզ
մեծամտությունը, տգիտությունն ու ժա-
տությունը, ծուլությունն ու չմահավանու-
թյունը, մարդկանց չարիք պատճառելով՝
հրճվելը, ուրիշների հաշվին խարդախու-
թյամբ հարստանալու մարմաջն ու մոլուց-
քը: Այդպիսին է «**Ժանտ փուշը**» առակում
պատկերված իրավիճակը: Մարդկանց
փեշերից անընդհատ քաշող, նրանց
ծակծկող ու ցավ պատճառող փուշը հրճ-
վում է, բավականություն ստանում՝ ուրիշ-
ների տները քանդելով: Արդար է հեղինա-
կի դատավճիռը, որ բխում է մարդասիրու-

թյան ու արդարության ժողովրդական ըմ-
բռնումներից:

Էդպես տուն քանդող փշեր խիստ
շատ կան,
Երանի՛ մի օր նրանց կրակին տան:

«**Բարդին եւ վազը**», «**Անքաղաքավարի
էշը**», «**Էշն ու բլբուլը**», «**Կատուն ու մու-
կը**», «**Շգն ու շունը**» առակները երեւան են
հանում կյանքի տգեղություններն ու այ-
լանդակությունները, եւ բարձր մարդավա-
րության իդեալների դիրքերից ծաղրվում
ու քննադատվում են դրանք: Շունն իր
շնային պարտքն է կատարում՝ հաչում է
բոլոր անցորդների վրա, նրա բնույթն է
այդպիսին: Պարզապես ողջամիտ մարդիկ
պետք է կարեւորություն չտան նրանց հա-
չոցներին եւ շարունակեն իրենց ճամփան,
իսկ շները «կհաչեն, կհաչեն, էլ ետ կդի-
շանան»: Կատուն մուկ է բռնել՝ պետք է ու-
տի, բայց նա միանգամից չի ուտում մկա-
նը, այլ երկար խաղում է նրա հետ, բավա-
կանությամբ է տանջում իր զոհին, հետո է
ուտում: Անշուշտ Խ. Աբովյանը մարդկա-
յին դաժանությունն է ծաղրում՝ զոհերին
կարեկցելով:

Անխիղճ, անիրավ իսանի սրտին
Ուրախություն է տանջել ընկերին:

Աբովյանական ամեն առակ դեպք-գոր-
ծողության հետ միասին ունի իր եզրակա-
ցություն-բարոյախոսությունը: Նրա ա-
ռակների գրապատմական արժեքն այն է,
որ միջնադարի հայ համաշխարհային ա-
ռակագրության լավագույն ավանդների
գործադրությամբ նա նոր ժամանակնե-
րում վերականգնեց այդ ժանրի գործա-
ռույթները՝ սկզբնավորելով չափածո ա-
ռակի տեսակը հայ նոր գրականության
մեջ եւ ունեցավ իր ավանդների շարունա-
կողները հայ նոր ու նորագույն գրականու-
թյան մեջ՝ հանձին Յ. Թումանյանի, Ավ. Ի-
սահակյանի, Յ. Շիրազի, Մ. Կորյունի, Ա.
Դարբնու եւ ուրիշների:

Շարունակելի

Սամվել ՄՈՐԱՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՆԱՏԵՂԾԱԿԱՆ ՀԱՆՃԱՐՆ ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ

Սկզբը՝ էջ 7

Ըմբոստ պոետը, իհարկե, լավ
չի իմացել հայերեն. այդ է վկա-
յում Ավգերյանի տված գնահա-
տականն իր այլազգի սանի հա-
յերենի իմացությանը: Այնուհան-
դերձ, նրա լեզվիմացությունն
այնքան էր, որ կարող էր խոսել եւ
Ավգերյանի աջակցությամբ
թարգմանություններ անել հայե-
րենից, որոնք օգնել են նրան՝ հա-
յերենի գիտելիքներն ամրապն-
դելու:

Բայրոնի հայերենի իմացու-
թյան հետ կապված՝ միանգա-
մայն ճիշտ միտք է արտահայ-
տել Խաչիկ Դաշտենցը. «Կարե-
ւորը այն չէ, թե Բայրոնը որչա-



փով է սովորել հայերենը: Կարե-
ւորը երեւոյթն է, այն ջերմ հա-
մակրանքը, որ նա տածել է մեր
երկրի պատմության եւ գրակա-
նության հանդեպ, այն խանդա-
ված հափշտակությունը, որ նա
ամեն օր Ադրիականի փոթոր-
կոտ ջրերը ճեղքելով՝ գնացել է
Հայոց կղզին՝ մի ազնիվ նպա-
տակով համակված՝ սովորելու
հայոց լեզուն»:

Արփիար Արփիարյանը վկա-
յում է, թե ինչպես Բայրոնի մա-
հից հիսուն տարի անց այն իտա-
լացի գոնդոլավորները, ովքեր
նրան Սուրբ Ղազար էին տարել
ու բերել, հաճույքով վերհիշում
էին Ալբիոնի խենթ պոետի քմա-

հաճույքները՝ ծովի ամենափո-
թորկոտ օրերին իսկ իրեն ան-
պայման հասցնել այդ կղզին:

Բայրոնը բացատրել է հայոց
լեզուն սովորելու շարժառիթնե-
րը: Բանն այն է, որ բանաստեղծն
Անգլիայից բաժանվել էր՝ նգովե-
լով իր հայրենիքը. Լոնդոնում
նրա դեմ անթիվ դավեր էին լա-
րել, նրա հոգին ալեկոծված էր, եւ
նա դառն իրականությունը մոռա-
ցության գիրկը հանձնելու հա-
մար կարիք էր զգում իր միտքը
կլանող ու չարչարող մի ծանր ու
դժվար զբաղմունքի:

Շարունակելի

Յոհան ԲԱՆՈՅԱՆ (Արմենյան)
Բանասիրական գիտ. թեկնածու

ՄԱՐ 1243 Թ. Բ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Սկզբը՝ էջ 6

Կոստանդին Ա Բարձրբերդցի Կաթողիկոսի շրջաբերականի
մեջ ներկայացված 25 գլուխներից (որոնք ուրիշ օրինակներ վե-
րածում են 23-ի՝ 2-ը իրար խառնելով) առաջին 4-ը ձեռնադրու-
թյան մասին են:

Ա. «Եկեղեցում ամեն ձեռնադրություն, որ Սուրբ Հոգու պար-
գեն է, եւ որ տալիս է արժանավորներին, առանց փողի լինի՝
ըստ կանոնների, որովհետեւ այն փողը Հուդայի ու կախարդ Սի-
մոնի ախտն է, որ խոտվեցին, իսկ նվերը նրանց չի վերաբերում,
որ տեղ-տեղ աղքատության պատճառով վերացած է» (Կիրակոս
Գանձակեցի, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 217):

Բ. «Այնուհետեւ միայն արժանավերներն ու գիտուններն առ-
նեն եպիսկոպոսության աստիճան՝ մանրամասն քննությամբ ու
երաշխավորությամբ եւ թեմի համաձայնությամբ, առանց կա-
շառքի. հասակով երեսուն տարեկանից ոչ պակաս» (Կիրակոս
Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 218):

Ժողովրդին ապաշխարություն քարոզելու, Զրիստոսով փրկու-

թյուն շնորհելու ու նոր կյանք պարգեւելու եւ Սուրբ Հոգով նրան
այդ կյանքի մեջ առաջնորդելու համար անհրաժեշտ են այդ բոլոր
տալիք շնորհներն ամբողջությամբ ստացած ու Սուրբ Հոգով լրա-
պես սպառազինված ընտրյալ պաշտոնյաներ: Այդպիսի պաշտո-
նյաները կարող կլինեն ծառայել իրենց կոչմանը միայն այն ժամա-
նակ, երբ նախ՝ հնարավորություն ունենան ստանալու Աստծուց
այն բոլոր շնորհները, որոնք կամ որոնցից պետք է բաշխեն հավա-
տացյալներին, եւ երկրորդ՝ պետք է միջոց ունենան որոշ կարգով
ավանդելու իրենց ունեցածը (տե՛ս Տեր-Միքելյան Ա., Հայաստա-
նյաց Առաքելական Եկեղեցու քրիստոնեականը, Ե. Եջմիածին,
2007, էջ 486): Ինչպես որ Աստծո արքայության հաստատությունն
սկսվեց Հիւս Ուխտով եւ կատարումը ստացավ Նորով, այնպես եւ
այս աստվածադիր քահանայությունը իբրեւ նախատիպ սահման-
վեց Մովսես մարգարեի միջոցով եւ իսկական հաստատության
հասավ Զրիստոսով:

Շարունակելի
Գոռ ԳԱՆՍՅԱՆ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Զրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 18.05.2018թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ